վոր հոկող տէքի նման հետեւում ե շուկայի առևտրին ու շար-
ժումին:

(Զորյան. «Կարմիր արագիլը»)

(Տես § 37) 55. Արագրել հայցական հոլովով գրված գոյականները, փակագծում հենց կացեր:

Մեկ անգամ գյուղում Տորքին գայրացրին,
«Անզեղ, զե՞ Անզեղ» յետքից գոչեցին.
Ել չըհամբերեց, պոկեց մի մեծ ծառ,
Ավլեց նրանով ամբողջ գյուղն իսպառ,
Ասում եմ ավլեց, չըկարծեք սրբեց,
Այլ տուն, գոյ, մարաք գետնին հավարեց,
Փախան մարդիկը ճանձերի նման,
Ել սկ կրկանգներ Տորքին հանդիման,
Այսպիս յերբ նրա ընությունն իմացան,
Ել այսուհետև սրտին չըդիպան,
Այլ սեծ հարգանքով պատվասիրեցին,
Պարերգ շինելով, զովարանեցին.
Տղերք, աղջըկեք՝ ձեռք-ձեռքի տված
Յեվ պարում եյին, և գովում Տորքին:
Ել այսուհետև նրա գեմքն անեղ
Առաջգա նման չեր թվում տպեղ:
Անդութ չեր Տորքը և վոչ ել անգետ,
Լավ վորմաղիլ եր և ճարտարապետ.
Ահապին վեմեր նա բերավ տաշեց,
իր քանդած գյուղը նորմեկանց շինեց.
Յեվ այսուհետև իր ուժն ահագին
Նա գործ եր դնում միշտ զեպի բարին:

(Վ. Աղայան. «Տորք Անզեղ»)

Որի նա կ'

հայցական ստորոգյալ

Տորքին (մամ) — գայրացրին
ծառ (բնչ) — պոկեց:

(Տես § 37) 56. Սարտագրել յեվ փակագծերում դրված
գոյականները գործածել նախագասության մեջ
հայցական հոլովով:

Ամենքը գիտեն (Արդուլ)... Նա փնտռում եր (Ահմադ ու
Ռիզա)... Վիրապորներին՝ (Մարգար և մի քանի բանվորներ)
բաց թողին ամբուլատորիայից, իսկ (Գրիգոր ու Արդուլ) տա-
րան հիվանդանոց: Համրոն քաղաքում (Գրիգոր) ծառա տվակ
բազակ Արտեմի տանը: Պայմանն այն եր, վոր Գրիգորը պետք ե
(տուն) մաքրեր, (ամաններ) լվանար, (վոտնամաններ) սրբեր...
57. Հետեւյալ գոյականները գործածել հայցական հոլովով,
յուրաքանչյուրի համար կազմելով նախագասություն:

Աշակերտ, ուսուցիչ, Հրաշ, Յերեվան, Մոսկվա, գրիչ, մատիս,
խոս, աղավնի, ազնավ:

Ո Ր Ի Ե Թ Կ'

Աշակերտը սիրում ե իր ուսուցչին:

(Տես § 38) 58. Սարտագրել բացառական հոլովով
դրված գոյականները:

I. Գողն ել մի կռնից, գելն ել մյուս կռնից,
Աշք թէքեցիր—բանիդ տերը չես.
Քաշում են տանից, քաշում են գռնից,
Ու չես իմանում վոր կողմը թոշես: (Հ. Թ.)

Թէ տանուտերին դանգատ եմ դնում,
Բան չեմ վաստակում բացի գուշմանից,
Գողերի հետքը իր տունն են տանում,
Համեցք դիվան ուզիր սրանից:

Յերեկ իրիկուն եղ կողքիդ սնից
Կախ ելին արած յերեք հրացան...
Քանի՞ քանի մարդ կորավ իր տանից,
Քանի՞ քանի մարդ դառավ մարդապան:

(Հ. Թ.)

Յեվ մութ այրերից մամոստ ժայռերի,
Թավուտ ծմակի լոին խորքերից
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
Արձագանքն ահա լուսմ եմ նորից:
Թնդում ե զիարթ ազմուկը բինի,
Բարձրանում ե ծուխն իմ ծանոթ ուրթից,
Ու բոլորն ա՛ա նորից կենդանի
Յելում են աշխույժ վաղորդյան մութից,
Ու թմրմ, ցողապատ լենների լանջում...
Սուս... ականջ արա, — հովիվ ե կանչում:
(Հ. Թում.)

(Տես § 39) 59. Սարտագրել գործիական հոլովով գրկած
գոյականները յեվ գրել նրանց բացառական ձեմք:

Դ Ի Լ Ի Զ Ա Ն

Արեւ մայր մտնելու մոտ մեր ուղենորները հասան ամառա-
նոցի հաշակ վայելող Դիլիջան ավանը:
Ալստեղ կամսարյանը հյուրանոցի անուն կրող մի տան
մեջ զիշերային հանգստարան գտնելուց հետո՝ լելավ փոքրիկ
ավանը գիտելու: Փոշու խճուղու աջ ու ձախ կողմերում կա-
ռուցված յերկու կարդ քարաշեն տները, վորոնք ավանի ամբող-
ջութունն եյին կաղմում ե վորոնց մեջ ապրում եյին ամառա-
նոց յեկողները, հաճելի տպագրություն արին կամսարյանի
վրա: Նա իսկույն հիշեց Բորժոմը յուր գեղեցիկ վիլաներով,
մաքուր փողոցներով, ընդարձակ պարկերով, ջրերի առատու-
թյամբ և առավել ես ընակիչների փայլուն արտաքինով ու գրա-
վիչ նիստ ու կացով և յեկալ այն համոզման, վոր Դիլիջանը
միայն հասարակ մահկանացուների համար կարող ե ամառանոց
համարվել:

Բայց յերբ խճուղին յերկուստեք փակող շինություններից
հեռանալով՝ բարձրացավ դեպի ավանի ձախակողմը, նրա առաջ
բացեցավ մի գեղանկար հորիզոն, վոր անփոփում եր յուր մեջ
Ալստեղ ձորահովիտը՝ յուր կարկաչահոս գետակով, գալար ա-
րոտներով, վոսկեփայլ արտերով, իսկ մի փոքր հեռվում, խա-
ղաղանիստ գյուղի միաշար տնակներով և նրանց առջև կարգով

տարածվող կտնաչաղարդ բանջարանոցներով։ Յուր կանգ առած տեղից քիչ հեռու սկսվում եր յեղանիների խիտ անտառ, վոր գնալով տարածվում եր դեպի հեռավոր լեռների կատարները, վորոնց այդ վայրկյանին վոսկեղոծել եյին արևի վերջին շողերը։ Զորանովիտ յեղերող դիմացի բլուրներից, վորոնց հետեւ շուտով պիտի թազշեր արեց, վիշում եր ախորժ զեփուռ՝ բերելով յուր հետ կենարար մի զով, տոգորված լեռնային ողի, դալարի և ծաղիկների անուշ բուրմունքով։

(Մուբացան. «Առաքյալը»)

Ո ր ի ն ա կ'

գործիական	բացառական
փողոցներով	փողոցներից

(Տես § 39) 60. Արտագրել գործիական հոլովով գործածված բառերը, փակագծերում նշելով, թե ինչ եացի յեն պատասխանաւմ։

Արծիվը մի վոլորտ կատարեց այն գարշելի վայրի վրայով, ուր այսպես ճնշվում են հոգիները. հրձից հետզհետե մոլեգնող հրդեհի ընթացքով և բուռն, անսահման ու անզուսով կարուով՝ ընկերացած տարերքի խոլական ընթացքին՝ սուրաց դեպի ամենի ժայռերը, ամպեղեն փորսաները, դեպի իր աղատության անմատչելի ու հերոսական բարձունքները...
(Մուբան. «Արծիվը ու վորդը»)

61. Կազմել նախադասություններ յեվ գործիական հոլովով գործածել հետեվյալ գոյականները։

Դաստիարակություններ յաջական առաջարկ առաջ առաջ եր գնում, այնքան արագ, վոր մյուս զորացածակարը, հետ մնալով կարևոր և անկարևոր պատճառներով, իրենց գանգաղկուությամբ խախտում եյին համակարգած հարձակման ընդհանուր միտոնական պլանը. Անցնելով առաջ և ճակատից խփելով, Զապակի դիվիզիան ավելի շատ քշում, քան ջարդում եր թշնամուն, կամ զերի վերցնում։ Եերթերում փորձամած մարտիկներն ապշեցնում եյին իրենց տոկունությամբ, իրենց սակավապեսությամբ և պատրաստակամությամբ ամեն ժամանակակից ամեն մայմաններաւմ և ամեն վիճակում ընդունելու հարվածը. Լինում եյին գեղաքեր, յերբ շատ վերստերով տարածություն անցնելուց հետո նրանք հոգնածությունից պար եյին թափվում և հանկարծ սկսվում եր կոփուց. Կարծես հոգնած չլինելին. դիմագրում ելին հարձակմանը, իրենք եյին

վոչ մի խնդություն տեսա իմ որում,
վոչ ել մի անգամ աշքս լիացավ։
(Հ. Թ.)

Պարում և ձմեռն հարսանիքներում,
կամ մեծավորի թեփշի լե լիզում
Մինչև մի քանի շահի լե ճարում,
են ել տաճում և, լափում թիգլիսում։
(Հ. Թ.)

63. Կազմել նախադասություններ յեվ ներգոյականով գործածել հետեվյալ գոյականները։

Դաստիարակություններ յաջական առաջարկ առաջ առաջ եր գործածել հետեվյալ գոյականները։

Ո ր ի ն ա կ'

Մեր դաշտում փթթում են անհամար ծաղիկներ։

4. Յեզնկի Յեվ ՀՈՒՆԱԿԻ

(Տես § 41) 64. Արտագրել՝ հոգնակի բվով գործածված գոյականները գարձենելով յեզակի, յեզակի բվով գործածվածները՝ հոգնակի։

Զապակի գիդիղիան արագ առաջ եր գնում, այնքան արագ, վոր մյուս զորացածակարը, հետ մնալով կարևոր և անկարևոր պատճառներով, իրենց գանգաղկուությամբ խախտում եյին համակարգած հարձակման ընդհանուր միտոնական պլանը. Անցնելով առաջ և ճակատից խփելով, Զապակի դիվիզիան ավելի շատ քշում, քան ջարդում եր թշնամուն, կամ զերի վերցնում։ Եերթերում փորձամած մարտիկներն ապշեցնում եյին իրենց տոկունությամբ, իրենց սակավապեսությամբ և պատրաստակամությամբ ամեն ժամանակակից ամեն մայմաններաւմ և ամեն վիճակում ընդունելու հարվածը. Լինում եյին գեղաքեր, յերբ շատ վերստերով տարածություն անցնելուց հետո նրանք հոգնածությունից պար եյին թափվում և հանկարծ սկսվում եր կոփուց. Կարծես հոգնած չլինելին. դիմագրում ելին հարձակմանը, իրենք եյին

(Տես § 40) 62. Արտագրել ներգոյական հոլովով գործածված գոյականները։

Յես քեզ որինակը Ես խոր ձորերում
Ես և չորս քսան տարելու լրացավ,

հարձակման անցնում, գրոհ տալիս, հետապնդում... Սակայն այնպես եր լինում, վոր ամենորյա կոյի վներն ու տեղափոխությունները ծայրաստիճան ուժասպառ եյին անում մարտիկնարին: Այդ միջոցին հենց առաջին դադարին մեկնվում եյին ու քնում մեռածների պես, հաճախ առանց պատշաճ հսկողության Քնում եյին ամենքը՝ թե հրամանատարները, թե կարմիր բանակայինները և թե պահակները..

Ո ր ի ն ա կ'

հոգեակի	յեզակի	յեզակի	հոգեակի
զորամասերը	զորամասը	ձակատից	ձակատներից

5. ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

(Տես § 44—54) 65. Սուտագրեն, Եօնով փակագծում, թե վո՞ր հոլովման և պատկանում գոյականը:

Ծագում ե մանուկ արել գարնան
Կովկաս լեռների ձյունի պատնեշից...
Հովիվ, հովկունի նստած շարքերով
Կթում են ուրախ և անհոգ ինդում...
(Միքարյան)

... Հիմա գառնում ես դու տուն
Յեվ գոհ, և արի,
Ու ժպտում ե քո հողին
Փառքը պայքարիդ:

(Մարյան)

Ո ր ի ն ա կ'

Ծագում ե մանուկ (ան) արել (ի) գարնան (ան)...

(Տես §§ 44—54) 66. Սուտագրել յեվ փակագծում դրված գոյականները գործածել համապատասխան հոլովմավ ։ Եոր փակագծերում Եօն գոյականի հոլովմավ:

Դադ (առավոտ) կոլխոզնեկները սկսել եյին քաղհանը (Ճարիղեղ) ու (Ճիախոտ) (ցանքեր): Բնդարձակ (դաշտ), սկսած կուսողի մեծ (ալղի), սփռել եյին մի քանի տասնյակ տղամարշիկ ու կանաչք ու մաքրում եյին ծիլերը (մոլախոտ):

... Առավոտյան հովը հետզհետե տեղի յեր տալիս (կեսոր) (տապ). տաքացած հողն ալիքում եր ներքեից իր տոթը, ծանրացնում (շունչ) ու քրտինք տալիս (ճակատ). արել խայթում եր կորահած (մեջք), յերբեմն միայն զիջելով (սար) յեկած (հով), վորը թեթև անցնում եր իր ախորժելի (շունչ) ու դանդաղում զիմացի (Ճառերի) վրա: Դարավոր (բնկուղենի) ծանրախոր, խուլ ազգկում եր իր խողոր (տերեներ), կհուսենին բացվում, կարմրին եր տալիս իր նորահաս (պոռւղներ). իսկ (սալորենիներ) մանրիկ աերեներն արագաշարժ պլար ելին բռնում:

(Որպես «Մոլախոտը»)

Ո ր ի ն ա կ'

Վազ առավոտից (բաղառ.) կոլխոզնեկներն սկսել եյին քաղհանը ճակնդեղի (սեռակ.) ու ծխախոտի (սեռակ). գաշտեարում (ներգոյակ):

(Տես §§ 44—54) 67. Վորուել գոյականների թիվը, հոլովը յեվ հոլովմամբ:

I. Բայց շուտ ջոկելով մայրերը գառից,
Հովիվը քշեց նրանց գեղ արոտ,
Մահակն ել ուսին դառները բինից
Տարավ զառնարած սառն ազրյուրի մոտ:
Հովիվ, զառնարած մի տեղ խմբվելով,
Լախտի յեն խաղում, տառյոլ թուշկոտում.
Հրձգում են նրանց կայտառ խաղերով
Ծերերը՝ ծածկված զառն մուշտակում.
Ամեն մի նրանց ճարպիկ թոխչողը
Հիշում են վաղուց կորած մանկություն,
Շոյելով ճերմակ միրուքը ձեռքով,
Կանչում են՝ ճնամարդ, նամարդ

Ճերություն:

Մեկն իր մուշտակը մի կողմն և գրում
Յեվ դիտմամբ խառնվում տղերանց
խաղին,
Մի լախտ ե խլում, վոլորում ձեռքում,

Յով առիթ տալիս անվերջ ծիծաղին:
Կանչում են «Ալն», լախաը թոցրու,
Մեր պատի մեջքը մի լավ տաքացրու...»

(Վ. Միքայել «Լալվարի գորսը»)

Ո Ր Ի Ա Մ Կ՝

Գառից—յեղակի, բացառական, ի հոլովման:
Մայրերը—հոգնակի, հայցական, որ հոլովման:

II. ՅԵՐԱԽԱԳԾԵՑ ԱՌՅՈՒԾԸ

Հոռմի իշխաններից մեկի ստրուկ Անդրոկլեսը մի շատ ծանր էանցանք գործեց և պատժից պատվելու համար փախավ Աֆրիկա: Այդ յերկրում սարսափելի շոգ և լինում: Անդրոկլեսն անտանելի շոգից պատսպարվեց մի քարայրում: Բայց ինչպես սփրթնեց նա, յերբ մի քանի վալրկյանից հետո նույն քարանձավը մտավ մի ահուելի առյօւծ: Առյօւծն իր բնտկարանում հյուր տեսնելով, անմիջապես մոտեցավ նրան և մոնչյաւնով իր ահազին թաթը մեկնեց զեավի նա:

Անդրոկլեսը հասկացավ առյօւծի ցանկությունը, նա զննեց և թաթից մի յերկար փուշ հանեց: Առյօւծը թեթևություն զգաւ լով, սկսեց լիզել Անդրոկլեսի ձեռքը: Այդ վայրկյանից մտերմություն սկսվեց առյօւծի և Անդրոկլեսի միջև: Առյօւծն ամեն որ իր վրասի մի մասը բերում եր Անդրոկլեսի համար, շարունակ լիզաւմ եր նրա ձեռքերն ու վոտները:

Եերեք ամիս անցավ: Անդրոկլեսն այսքան ժամանակ մարդու յերես չտեսնելով սաստիկ ձանձրացավ քարայրից և վճռեց լույս աշխարհ դուրս գալ: Բայց այստեղից դուրս գալն ու բանվելը մեկ յեղավ: Անդրոկլեսին կապկանցին և ուղարկեցին Հռոմ իր պատիժը կրելու: Առյօւծը նույնպես ըսնվեց և ուղարկվեց Հռոմ:

(«Հառկեր»-էց)

6. ԱՇԱԿԱՆ ԱՆՈՒՆ

(Տես § 56) 68. Արտագրել յեվ ընդգծել ածականները:

Փ Ա Ր Վ Ա Ն Ա

Բարձրագաճ Արուշն ու Մըթին սարեր Մեջք-մեջքի տփած կանգնել վեհափառ, իրենց ուսերին Զագախքից ել վեր՝ Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ ենտեղ արծըվի նըման, Ծիծուն կապուտակ յերկնքի ծոցում, Նըստում եր են սեգ սարերի արքան իրեն Փարվանա Ճերմակ ամրոցում:

Փարվանա արքան մի աղջիկ ուներ, Ու վոչ մի վորսկան զեռ իրեն որում Ենքան զեղեցիկ լեզնիկ չեր տեսել՝ Իր վորսն անելիս մթին սարերում:

(Հով. Թումանյան)

(Տես §§ 56—58) 69. Արտագրել ածականները յեվ վորուել Երանց տեսակը:

I. Մոտ քառասուն տարեկան մսեղ մարդ եր նա պստիկ, ժպտուն աչքերով, կլորիկ, մաքուր սափրած կարմիր գեմքավ, բածկոնի տակ հազած զեղին չեսունչյա արխալուզով, վոսկեղոծ նեղ քամարով և ձեռքին շարունակ մի կարծ համրիչ զեղին հատիկներով, վոր նա ավելի ուտ ափից ափ եր նետում քան հատիկներով գցում:

Հետեւյալ որը ճաշից հետո նա կատարեց իր խոստումը և յեկավ Ոստնի առաջնորդությամբ: Նրա ճարպու զեմքից, մի քիչ ծուռ գրած զգակից և սովորականից ավելի ժպտուն, աչքերց յերկում եր, վոր լավ կերել-խմել եր:

Եեկավ, ու թաղը նորից զբնդաց: Այս անգամ հետաքրքրու-

թյունն ավելի մեծ եր, քան նախորդ որը, յերբ նոր եր տաշը պածվել Մարթայի խելագարության. լու ըլ: Թաղի կանայք, իրար ձեն տալով, վազում երին, վորը ծծկեր յերեխային խտածէ վորը վոտարորիկ, վորը շտապելուց չուստի մեկը մոռացած, մյուսը քարշ տալով վոտին, վորը վլսի աղլուխի ծայրերը շտապ կապելով, վորը կուրծքը կոճկելով: Ու ամենից առաջ, թաղի անթիվ յերեխաները համարյա թե տկոր ու վոտարորիկ, յոչկոտելով ու ծկլթալով:

(Նար-Դոս. «Ինչպես բժշկեցին»)

Ո Ր Ի Ա Մ Կ՝

Մսեղ—վորակական
Զեսուչյա—հարաբերական

II. ՅԵՐԿՐԻ ՄՇԱԿԱՆԵՐ

Ո՞, ծանը հոգսերի խղճուկ զավակներ,
Վորքան համբերող, քաջ և ձեր հոգին.
Տանջվում եք անփերջ, որեր, տարիներ,
Կարծես տանջանքն և միայն ձեր բաժին...

Մանուկ որերից ձեր մեջ ապրելով,
Վկա յիմ լեզել ձեր շամտ ցավերին.
Տեսել եմ, ինչպես տանջանքի գնով
Դուք հաց եք տալի հայրենի յերկըն:

ՏԵՍԵԼ եմ, ինչպես հուսալից, դվարթ
Դուք մշակում եք անմշակ դաշտեր.
Ինչպես տանջանքում անլաց, անփհատ
Դուք յերգ եք յերգում, վաստակի յերգերէ

Տեսել եմ, ինչպես ամառվա շոգին,
Յերբ կրակ ե թափում արևառ յերկինք,
Վոսկեցող արտում, մանգաղը ձեռքին,
Դուք մեջք խոնարհած թափում եք քրտինք.

III. Տեսել եմ, ինչպես գունաթափ աշնան
Հայրենի յերկը կուրծքը պատուելով

Ա, ինտեղ թաղում եք գանձերի նման
Վոսկի հատիկներ, վոսկի հույսերով...

Տեսել եմ՝ գարնան սիրուն որերին,
Պայծառ արեր գեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալեծուփ արտերի մոտին
Զեզ ծունկ խոնարհած չերմ աղոթելիս:

Տ Ե Ա Խ Ե Ա Մ Կ՝
Զմռան զիշերներ նստած իրճիթում,
Հոգնած ձեռքերիդ դադար չեք տալի—
Խոփն եք նորոգում, մանգաղը սրում...

Յեզ այդպես աղնիվ գործին անձնվեր
Ապրում, տանջվում եք անբավարարում.
Յեզ ձեր տանջանքում, հերոս-մշակներ,
Արզար վաստակն և ձեզ վոգերում:

ԱՌ, հայրենիքիս քրտաջան գորդիք,
Վորքան համբերող, քաջ և ձեր հոգին.
Զեզնով և միայն կանգուն հայրենիք.
Համբույցը ու որհունքը

Ձեր սուրբ վաստակին:

(Ա. Մատուրյան)

(Տես § 59) 70 Ա-ագրել վորակական ածականեներ յեզ
Կագմել նեած համեմատության ասեինանեները

ԱՏՓԱՆ/ ՇԱՀՈՒՅ ՅԱՆԻՆ

Աշրերդ կապույտ յեթերի նման
Յեզ հոգիդ շուշան,
Սիրտդ իորունկ ծով աղնիվ, աննման,
Հւկեր Շահումյան
Զայնդ զանգակի վահմ մի դողանջ,
Թափանցի լի զիտեր
Յեզ վոգեվորել շեշտողը իր սքանչ
Վհատած սրտեր:

Ասորդ տեր ուկ խոսք, ալլ ոլատգամ հզոր
Կոյձակնող ու վաս,

Թշնամիներդ և մինչև այսոր
 Քեզնից զողահարտ
 Դու և չմեռար, նորից կյանք առար,
 Յել հաղթ քո մահով
 Ծլեց ու աճեց մի նոր գաղափար,
 Փովեց աշխարհով:

Մահղ խթանող ցնցեց շատերին
 Մեր կուռ շարքերում,
 Ո՛, յել ու մի տես քո մարտիկներին
 Կովի գաղտերում:
 Բալլում են ահա հաղար հաղարով
 Քո ճանապարհով
 Յել իերդում քո տեղ վրեժը լուծել,—
 Դճն, գնամ բարով...

(Հ. Հակոբյան)

Ո ր ի Շ տ ի
գորակական ածականներ

գրական	համեմատական	գերադրական
տոսինան	աստիճան	աստիճան
իշպույտ	ավելի կապույտ	ամենակապույտ
ազնիվ	ազելի ազնիվ	ամենազնիվ, ազնվագույն

71. Գրել 10 գորակական ածական յեզ կազմել երանց
համեմատուրյան աստիճաններ:

72. Գրել 20 հարաբերական ածական:

7. ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

(Տես §§ 64, 65, 66) 73. ա) Առաջել բժականները բառերով:
Դրել նույն բժականների գասականը նույնպես բառերով:

Դեռ ^{1/2} տարի չանցած՝ Առնոն արժանացավ «Նոմականա»
տար աղավնիներ պահող ընկերության» 1-ին պարզեին:
Նոմականա աղավնիների համար ամենագժվարը ծավի

վրայով թռչելն ե, ուր չկա վոչ մի ուղեցույց նշան: Դժվար ե
թռչել նամանավանդ մառախուղի ժամանակ:

Մի որ Առնոյին 2-ուրիշ աղավնիների հետ տեղավորեցին
մի մեծ նավում, վոր պիտի մեկներ Ամերիկայից Անգլիա: Վճռել
եյին աղավնիներին բաց թողնեն այն ժամանակ, եթե ափը
բոլորովին կանհետանա:

Շատ չանցած՝ թանձր մառախուղ պատեց ովկիանուը
մինչև հանդիպեցին մի ուրիշ՝ Նյու-Յորք գնացող նավի: Ա. գ
նավը աղավնիներին պիտի վերադարձներ տուն, Բայց 10 ժամ-
վա չափ ճանապարհ կարելուց հետո մեծ գերախություն պա-
տահեց՝ շոգեմեքենան փչացափ: Շոգենավը տաշեղի նման այս
ու այն կողմն եր ընկնում, սուլում, ոդնություն կանչում, բայց
ունող չկար: Սկսվեց մեծ իրարանցում, սարսափը տիրեց բո-
լորին:

Հանկարծ մեկը հիշեց, վոր նավում աղավնիներ կան:
Շտապ լնարեցին նրանցից մեկին, վորի համարն եր 2592: Նրա
պոչի տակը կապեցին գլանաձև կոլարած նամակ՝ ջուր չծծող
կառրի մեջ դրած: Նրան բաց թողին, և նա անհետացավ մառա-
խուղի մեջ:

Կես ժամ հետո թողին 2-րդ աղավնին:

Ամենից վերջը բերին 3-րդ աղավնին, վոր մի փոքրիկ ու
նիհար թռչուն եր: Ծովագնացները փոշինչ չկիտեյին Առնոյի
մասին, միայն տեսան, վոր նրա վոտի ողակի վրա գրված ե-
«Առնո, թ 2590»:

Առնոյին բռնող նավատին նկատեց, վոր Առնոյի սիրան
այնպես չի բարախում, ինչպես առաջին իրկուսինը:

Առնոյի պոչի տակ կապած նամակում գրված եր,

«Առավոտյան ժամի 10, Հինգշարթի Նավի մեքենան կո-
տըրից Նյու-Յորքից 350 կիլոմետր հեռավորության վրա
Միանգամայն անողնական ենք մառախուղի մեջ: Վորքան կա-
րելի յե շուտ մի նավ ուղարկեք, վոր մեղ այստեղից հանի:
Ամեն բոպեն 2 անդամ սուլում ենք, մինը կարձ, մյուսը՝ եր-
կար:»

Նավագետա:
Նամակը, վոր գրված եր Նյու-Յորքի շոգենավային ըն-

կերության հասցեյով, նույնպիս գլանաձև փոլորեցին, դրին ջուր
ծծող կտորի մեջ, կապեցին Առնոյի պոչի մեջտեղը, վորից հետո
չնրան բաց թողին:

Առնոն շոգենավի շուրջը մի շրջան կազմեց, հետո 2-րդը,
3-րդը և իրար հետեից շրջաններ կազմելով՝ բարձրացավ և բոլո-
րովին կորավ աժպերի մեջ: Նա անշեղ թոշում եր դեպի աղավ-
նատուն: Աղավու տերը—Բիլին—նկատեց, վոր մի կապտավուն
աղամին նետի պես ոլացավ լուսամուտից և անմիջապես պրծավ
ջրի վրա: Բիլին հանկարծ աղաղակեց.

— Իմ սիրուն Առնոն ե յեղել:

Մի բոսե չանցած՝ նամակը Բիլիի ձեռքումն եր:

Առնոն 350 վերստ անցել եր և ժամ 40 րոպեյում:

Ցեղ չանցած 1 ժամ՝ անհրաժեշտ ոգնություն ուղարկվեց
խորտակվող նավը վրկելու համար:

(Ե. Սետոն Տոմոսոն. «Առնոն»)

74. Բառերով գրել հետեւալ թվերը. գրել նայել այդ թվերի
դասականները:

2, 3, 4, 9, 12, 13, 19, 22, 27, 39, 41, 70, 75, 80, 83, 89,
99, 1999:

Ո ր ի ն ա կ'

ութ ութերորդ...

75. Բառերով գրել 1—20 թվերը. գրել նայեք նույն թվերի
դասականները:

Ո ր ի ն ա կ'

տասնմեկ տասնմեկերորդ...

76. Բառերով գրել 21—30. գրել նայեք նույն թվերի
դասականները:

Ո ր ի ն ա կ'

քսանմեկ քսանմեկերորդ...

77. Բառերով գրել:

10, 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90, 100, 200, 300, 400,
500, 600, 700, 800, 900, 1000, 2000, 3000, 9000, 9999:

8. ԴԵՐԱՆՈՒԿԻՆ

(Տես §§ 60—69) 78. Վորուել անձնական գերանունների
ունմէք, թիվը յեվ հուովը:

Առում հն գեջ ես կարել դու մերին:

Իրանցն ասում են ու քեզ չեն լսում,

Մինչև չտեսնես մեծին, պիտերին.

Հիմի տես նրանք ինչքան են ուզում:

(Հով. Թում.)

Ինչպես եք ապրում, դու ձեզնից պատճի,
Զեր որ ու կյանքից, ձեր ցավ ու գարդից:

(Հով. Թում.)

— Յերկի շատ հարուստ մարդ ե,—ծաղրով նկատեց Վար-
դանը:

— Հարուստ չի, բայց ինձ շատ ե սիրում: Ինքը պսակված
չի, ուզում ե ինձ վորդեզսել:

— Յես ել եմ զնում Բագու, —մեջ մտավ գանգրահեր Լե-
լոնը:

Քեզ մով ե տանում:

— Մենք ընտանիքով ենք զնում:

(Ծիրվանզադե. «Կարդան Ահրումյան»)

Ո ր ի ն ա կ'

դու—յերկրորդ դեմք, յեղակի, ուղղական

(Տես §§ 70—79) 79. Արտագրել գերանունները յեվ վորուել
երանց տեսակը:

I. Զրկվել լավ ձիուց, միենույն ե, թե կյանքից զրկվել
լավ ձի, լավ զենք ու զբան, ահա յերիտասարդության սիրած

առարկան: Իսկ հորս համար իր այդ ձին իր զավակներից մեկն եր, քանի վոր ինքը ծնողություն եր արել նրան, այնպես եր խնամել մեծացրել:

Պետք ե ասեմ, վոր մեր ամենիս ել սիրելին եր Փաշան։ Նա ամենքիս ել ճանաչում եր, ինքն ել մեղանից մեկն եր։ Յես հազիվ վեց թե յոթ տարեկան եյի, բայց նստում եյի վրան ու տանում ջուր տալու։ Նա իմանում եր, թե ով ե նստած վրան և վոչ թե յես եյի տանում նրան ջուրը, այլ ինքն եր ինձ տանում, ճանապարհին շատ տեղ կանգնում, այս ու այն ձիռն մտիկ տալիս, վրնջում, կամ ճամփից շեղվում։ Թե շները հաջում եյին վրան, դարձյալ չեր փախչում, սրա նրա ըռսին մի լավ աքացի յեր տալիս և ինձ վողջառողջ տուն հասցնում։ Դե յեկ ու մի սիրի արագիսի իմաստուն ձիռն։ Յերբ մայրս եր նստում վրան, Փաշան դառնում եր մի ծանր գոմեց, կարծես ել են թոշկանը չե, այլ մի նոր արարած։ Այսպես ամենի տեղը գիտեր, ամենի պատիվը պահում եր։

(Հ. Աղայան, «Մեր կարմիր ձին»)

Ո Ր Ի Շ Ա Կ Ե

այդ—ցուցական դերանուն

իր—անձնական դերանուն...

Ա. Լուսարձակներն սկսում են գծագրել սև յերկնքի գրա:
Նրանք սահում են ինչպես վիթխարի, սրածայր քանտները:
Մեկը կանգ տռավի և միայն թնթեակի դողդողում եւ Անմիջապես
զրան միանում ե յերկրորդը: Նրանք խաչաձևում են, նրանց
մեջտեղում մի սև միջատ, վորը փորձում եր թաքնվել սավառ-
հակ եւ նա կորցնում ե հաստատակամությունը, նա դողում ե
կուրացած:

Յերկաթե սյուները մինք խփում ենք հողի մեջ, իրարից հավասար հեռափորությամբ Յերկու մարդ բռնում են կծիկը, իսկ մյուսները քանդում են փշալարերը։ Դա զգվելի փշալար են իրարից չափազանց մոտ ցցված յերկար փշերով։ Յես արդեն մոռացել եմ ալդ աշխատանքը և քերծում եմ ձեռքերաւ։

Մի բանի ժամ հետո աշխատանքն ավարտված եւ Բայց
մենք գեռ ժամանակ ունենք մինչև բեռնակիրների զալը։ Մե-
ղանից մեծ մասը պատկում եւ կ քնում Յես փորձում եմ անել

միենույնը։ Սակայն մի քիչ ցուրտ եւ Նկատելի յէ, վոր գտնը-
վում ես ծովի մոտերքը, անբնդհատ արթնանում ես ցըսից։

Վերջապես ինձ հաջողպում ե պինդ քնել: Հանկարծ արթ-
նանալով՝ յես վոչ մի կերպ շեմ կարողանում վորոշել թե վոր-
տեղ եմ գտնվում: Յես տեսնում եմ ասողեր տեսնում եմ վեր
թոշող հրթիռներ և մի վայրկյան այն տպավորությունն եմ ստա-
նում, թե քնել եմ տոնակատարության ժամանակ այդում: Յես
չդիտեմ առավոտ ե հիմա, թե յերեկո, յես պառկած եմ ազլա-
մուղի գունատ որորոցում և սպասում եմ քնքույշ խոսքերի,
վորոնք պետք ե հնչեն սիրալիք ու սրտառուց: Միթե յես լաց
եմ լինում, Յես սրբում եմ աչքերս: Սա այնքան հրաշալի յետ
Միթե յես լերեխա յեմ: Քնքույշ յերեխա... Դա տեսում ե մի-
միայն մի ակնթարթ, հետո յես ճանաչում եմ Կատչինսկու սի-
լուեաը: Նա նստած ե հանգիստ, այդ հին զինվորը, և ծխա-
մործ ե ծխում, —իհարկե կափարիչչափոր ծխամործ: Յերբ նա
նկատում ե, վոր յես արթնարա, ասում ե.

— Լավ վեր թռար: Դա միմիայն հրձիգ արկ եր: Նա պար-
թեց այստեղ՝ թփերում:

Յես բարձրանում եմ և զգում ինձ տալողինակ կերպով մենակ:

(Մեծաբնությունը կազմակերպվել է առաջին առաջակա աշխատավորության ժամանակաշրջանում)

(Տես §§ 70—79) 80. Արագրել յեզ վերուշել զերանունների
տեսակը յեզ հոյսքը:

І. Ինչու յե ալիքնես անբան նստել արծիվը: Խնչու, հարց-նում եր վորդը և նրա վորգային ուղեղը գրա պատասխանը չեր գտնում: Նա լսել եր արծիվների ամենի սերնդի մասին, բայց նա գաղափար չուներ վոչ վազքի և վոչ ել թոփչքի ձեւերի մասին: ահա, ինքն անցագ հատակին յեղած փոսերով ու բարձ-րություններով, իսկ այս արծիվը այդքանն ել չի անում. ուր ե հապա նրա արծվայնությունը... Բայց գուցե այդ բոլորը հե-քիաթ ե. կյանքը հենց իր՝ վորդի կյանքն ե. և իրավ. Ինչ ե նշանակում սավառնել բարձունքները, վազել ու ցատկոտել ապա փորձիր պոկվել գետնից, տեսնեմ կդանեմ փորեւ հենարան, վորի վրայով կարողանաս սողալ... Վաշ, այդ բոլորը ցնորքներ

հն, իսկ վորդը, ոհ, նու հոռի ծնունդ ե, նա ցնորքներով չի
ապրում. սոված սոված հաղթայան... Ահա վորդային կը անքի
իմաստը...

(Սիրաս. «Արծիվը ու վորդը»)

Ո ր ի ն ո տ կ'

այգակս . . . ցուցական գերանուն
նրանց (վաղքի) . . . ցուցական գերանուն, հոգնակի, սեռ. հոլով:
II. Ահ, այս յերեք չեյին կարող հանդարտվել արծիվի
վարարած զգացութիւնը: Յեզ աչժմ, ճշշտ այս պահին, յերբ ար-
ծիվը տարափած եր ազատութիւն բուռն տեսնչով՝ դրսում կատաղի
մուցքօվ շառաչում եր փոթորկեց: Խիս, թառձը ամպերը կու-
տակել եյին միմանց գլխի, յերկինքը ճայթում եր անավոր
վորոտումներով. թվում եր, իե գերացել են յերկինքի և յերկրի
սահմանները ու նորից նախական քառոն ե տիրում, և այդ
բուրի վրա միայն կայծակը, լուսատօն կայծակն ե, վոր ամենի
ճայթյուններով պատառուում ե ամպերի կուրծքը, թոչում ան-
սահման բարձունքների վրայից ու մռեզնում իր շապատի
վրա:

Տարերքը կատաղել ու գտղազել եր և տարերքի այդ մո-
լուցքին վոչ մի արարած զիմաղբել չեր կարող. բոլորը, բոլորը
քաշվել եին իրենց նկուզները, պատագարքել հաստ պատերի
արանքում և սարսափած՝ սիրտ անգամ չեյին անում զուրս
նայել: Միայն ու միայն արծիվն եր, վոր այդ պահին խիսդով
հետեւում եր տարերքի խոլական ընթացքին, ամեն մի վորուը
նրա հոռում նոր ու ուժգին փոթորիկ եր առաջացնում, կոյժակի
ամեն մի ճայթյունից և լույսի ամեն մի շիթից ալերաստը պես
պայծառանում եր նրա հոգին և ավելի ու ավելի պայծառ դարձ-
նում նրա տենչանքը գեպի կյանքը:

(Սիրաս. «Արծիվը ու վորդը»)

III. Ահա այդ պահին եր, վոր սարսափահար վորդը ինչ
վոր բան եր ուզում տսել, բայց և հենց այդ վայրկյանին, վոր-
տեղից վորտեղ մի վառեկ մոտեցավ և վորդին բերանն առավ.
ու մինչ վառեկը ձգուում եր վորդին կուլ տալ՝ արծիվը մոլեզին
թուիչքով ոդ բարձրացավ:

Վորդի գուխը, վոր զեռ դուրս եր մնացել՝ զարհուրած շար-
ժումով հետ գարձագ և նայեց արծիվին թուիչքին, և հայտնի

չեր, թե նա ինչ գաղափար պիտի կազմեր վազքի ու թոիչքի
մասին, քանի վոր նա փորձեց «պու-պու» անելով ինչ-վոր բան
ասել, բայց վառեկն այդ պահին նրան ամբողջութիւմը կուլ
ավեց:

(Սիրաս. «Արծիվը ու վորդը»)

9. Հ Ո Դ

(Տես § 80) 81. Արտագրել եոդ ունեցող բառերը, սացական
եոգերը փոխարինել սացական գերանուններով:

I. Ես վախկոտ նազարը մի գիշեր կնկա հետ շեմքն և
դուրս գալի: Վոր շեմքն և դուրս գալի՝ տեսնում և ճրքքնըքան
լուս-լուսնյակ գիշեր՝ ասում ե.

— Այ կնիկ, ինչ քարվան կտրելու գիշեր եա: Սիրոս ասում
ե՝ վեր կաց գնա չնդուանից յեկող Շահի քարվանը կտրի, բեր
առունը լցրու...»:

Կնիկը թե.

— Զենդ կտրի, տեղի նստի, քարվան կտրողիս մտիկ
արա...»:

Նազարը թե.

— Անզգամ կնիկ, ինչն չես թող անում, յես գնամ, քար-
վան կտրեմ, բերեմ առունը լցնեմ: Ել ինչ տղամարդ եմ յես, ել
ինչն յեմ գդակ ծածկում, վոր դու համարձակում ես առաջա
լսուսի:

Վոր շատ կովում ե՝ կնիկը առուն և մտնում, դուրս վակում:

— Հնդեմ եդ վախկոտ գլուխդ, զե հիմի գնա քարվան
կտրի...:

Նազարս մնում և դուանը: Վախից լեղապատառ և լինում:

(Հով. Թումանյան, «Բաջ նազար»)

Ո ր ի ն ո տ կ'

Զենդ կտրի—քո ձենը կտրի:

II. Մտքումդ, մտքներումդ, գրքիս մեջ, խոսքի, ձայնա
հնչեց, քաղաքիս աները, տետրակիս թերթերը: Նստարանիդ վրա
գրքերդ չկան: Հագիդ վերարկու յե: Աշքերդ խփիր: Լուսամուտ-
ներդ բաց են:

VI ԴԱՍՏԱՆ

1. ԲԱՅ

(Տես § 81) 1. Սրբագրել բայերը:
ՄՈՍԻՆԻ ԴՊՐՈՑԸ

Տնակն,ուր ապրում եր Մոսին, գտնվում եր գյուղի ծայշում: Նա բաղկացած եր մի հատ յերդիկավոր, միաբուռն ոդայից և ցածուն, բայց լայնադիր սրահից, վորի առաջ գտնվում եր փոքրիկ բակը, կիսով չափ պարսպած գետաքարերի անշաղախ պատով: Սրահում, այլ և բակի այն մասում, վորի վրա հարեանի աթարի գեղը տարածել եր լայն ստվեր, անկարգ ու խառն նստոտած եյին մոտ յերկու տասնյակ տղաներ, վոմանք կտավի փոքրիկ մինդարների կամ հին կարպետի կտորներ, վոմանք պատերի տակ ընկած սաւաքարերի, իսկ ուրիշներն ուղղակի հողի վրա: Նրանք ձեռքերնին մի-մի գիրք առած կարդում եյին: յերբեմն կամացուկ, յերբեմն մրմուլով, իսկ հաճախ բարձրածայն, առանց մեկը մյուսին նայելու, վորից և բակի ու սրահի մեջ բարձրացել եր ազմուկ ու ժխոր:

Տիրացու Մոսին, վոր Կամսարյանին հանդիպած ժամանակ յերկում եր կորաքամակ, այստեղ, աշակերտների առաջ ձեմում եր ձգված ու բարձրապլուխ: Մինչև անգամ մորթե գգակը, վոր նա ճանապարհին քաշել եր գլխին մինչև ականջները, այժմ վոչ միայն բարձր եր՝ ճակատը յերեալու չափ, այլ և ծուռ եր դրված, վորով նրա գեմքն ստանում եր համարձակ ու ինքնավստահ արտահայտություն: Նա ձեռքին ուներ հասարակ փայտից շինած մի յերկար քանոն, վոր նման եր վորմնադիրի գազի և վորոշ ժամանակ աջ ու ձախ ձոճելով մոտենում եր մերթ այս, մերթ այն աշակերտին: Յեկ փոխանակ խոսքով դիտողություն անելու, քանոնի ծայրով բոթում եր կամ մեկի կրծքին՝ կամենալով ուղիղ նստեցնել նրան, կամ մյուսի գլխին՝ վորպեսզ սա

շատ չկորացնե այն, իսկ հաճախ զարկում սրա ու նրա գրքին,
վորպեսպի ծնկների վրա դնելու փոխարին ձեռքերնին առնեն
(Սուրացան. «Առաջալը»)

2. ԴԵՐՄԱՅԱԿԱՆ ԶԵՎԵՐ

(Տես. §§ 82, 83, 84, 85) 2. Արագրել անկատար գերբայով
զործածված բայերը մի այունակում, նույն բայի ապառնի
գերբայը յերկորդ այունակում, իսկ անորու գերբայը յերրորդ
այունակում:

ՅԵՍ ԱՅՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ

Ե՞ն, վոր կիսահալ սառուցի տակից
Ժիր գտակներն են հերեւ լողում
Ե՞ն, վոր ձյուների վերջին հալուքից
Թավիշ աղվամաղ կանաչն և շողում,
Ե՞ն, վոր արեի կինսատու շողքից
Գարնան առաջին ծաղիկն և ծլում
Եկը մանուկի պես արթնացած թնից
Աչքերը ճմլում,
Յես ալն եմ սիրում:

Ե՞ն, վոր նայում ես՝ սարերի լանջին
Պուտերի խումբն և կարմրին տալիս,
Լսում ես ջահել արտերի միջին
Արտուրի ազատ կանչը թնդալիս,
Ծեփ այդ հաղթական ցնծալի կանչին
Տեսնում ես նորեկ լնկեր-թոշուններ
Արձագանքում են, տալիս վողջույններ
Աղատ յիթերում,
Յես այն եմ սիրում:

Ե՞ն, վոր ալլ սրտիդ գոհունակ ժամին
Տեսնում ես մեկ ել հյուսիսի կողին
Շողաց մի փայտակ... յիտքից ել խրոխտ
Հեռու ներգաշնակ մի անուշ վորոտ,

Ուր հոգիդ նույնալես թնդում ե, զգում,
Վոր ալդ գորոտից անձրեւ ե զայու
Ադը մաքրելու ու մեզ բերելու
Ցանկալի գարուն,
Հենց այն եմ սիրում:

(Հակ. Հակոբյան)

ՈՐ Ի Ա Կ

անկատար գերբայ ապառնի գերբայ անորու գերբայ

սիրում	սիրելու	սիրել
լողում	լողալու	լողալ
շողում...	շողալու...	շողալ...

(Տես. §§ 86, 87) 3. Գրել ընզգօծված բայերի վաղակատար յեվ
հարակատար գերբայները:

Նա յեկավ մրրիկի պես, զզզեց յերկրի զգեստները, մտավ
քաղաքները, զսուց, վորոտց, հետո անցավ-գարձավլ խումնց
ձորերը, խոյտավ բարձրավանդակները, զարկեց լեռնաստանի
հյուղերին, թափ տիեց լեռնցու ալաշուիների թերլը:

Դուրս բափիեցին բներից ստորերկրյա ուժերը՝ վոմանք
զարհուրած, վոմանք շփորփոծ:

Վոմանք ել սուր մտիկ տալով մրրիկին՝ բնազդորեն կոա-
նեցին նրա հարազատ շունչը և վոգեսրված զուրս յեկան հանդես:

Դարերը զարբնեցին լեռները վրա և վեր նսեցին:

(Դ. Դեմիքըան. «Բաշիդը»)

ՈՐ Ի Ա Կ

վաղակատար գերբայ հարակատար գերբայ

զզզեց ...	զզզուլ	զզզած...
խուցավ ...	խոյտուել	խոյտավձ...
թափիցին ...	թափկել	թափված...

(Տես §§ 82—90) 4. Սույնուսակում ռոված յեղանակով կազմել
բայերի գերբայական բոլոր ձեվեր:

Անորոշ	Անկատար	Ապառնի	Վաղակա- տար	Հարակա- տար	Յենթա- կայական	Հղձտկան
Խոսել	Խոսում	Խոսելու	Խոսել	Խոսուծ	Խոսող	Խոսի

Խոսել, բռնել, կտրել, մնալ, գնալ, կարել, գրել, սրել, բայլել,
չփել, տակալ:

Ծերունին սկսել եր ավելի հանգարտ բայլել: Նրա հնամաշ
տրեխներից ջուրը հօսում եր գուլպաների մեջ, վոտը քրջում:
Խոնակությունը բափանցում եր բաց կուրծքը:

Անցնելով՝ մի առ մի դիտում ելի յերկու կողքի արտերը:
Զրի հոսանքներն արմատախիլ ելին արել, քել տարել
ցորենի դալար ծիւերը և հավախիլ ակոսների մեջ:

(Վ. Փափաղան. «Արտը»)

3. ՅԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐ

(Տես § 96) 5. Սույնուսակում բայերը յեվ վորուել նրանց բիվը յեվ
գեմքը:

Վ Ե Բ Ա Դ Ա Բ Զ

Եհնության խավար զնդանից կրկին
Յես վերադարձա հզոր և հպարտ,
Յեվ ինձ վողջունեց ազմուկը զվարթ
Ու նոր խնդությամբ ալրեց իմ հոգին:

Անխոս տանջանքիս գիշերում անքուն
Իր հուրը վառեց մի պայծառ կարոտ,
Նոր սիրով լեցուն՝ դարձա յես ձեզ մոտ,
Յեվ նոր յերգեր են հնչում իմ հոգում:

Յեկա, վոր ալստեղ ձեզ համար ալսոր
Հրեղեն խոսքեր կում և խնդում,
Լսեմ հաղթական մարտի ցնծություն,
Տեսնեմ շարքեր ձեր հզորազոր:

Յեվ լուսաբացին, յերբ հոգնած լինեք,
Յերբ քնած լինեք՝ թշնամուց խարված,
Արեածագի ցնծությամբ արբած՝
Կանչեմ ձեզ, ճշամ՝ յեղբայրներ, յելեք...

(Վ. Տերյան)

Ո Ր Ի Ե Ա Կ՝
վերադարձա—յեղակի առաջին դիմք:

(Տես § 96) 6. Սույնուսակում գործածված
բայերը յեվ վորուել նրանց բիվն ու գեմքն:

Խ Ն Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

Այս փողոցում, ճամբի վրա,
Կրսամութին թե լույսին,
Աշխատում են հայր ու տղա
Ամբողջ որը միասին:

Ալեորը խոների հետ
Շարում ե քարը քարի,
Վորդին, ջահել ճարտարապետ,
Ավարտել ե այս տարի:

— Հայրիկ, պատը թեք և գնում,
Նայիր, գիծը ուր մնաց.
Հայրիկ, արագ, յետ ենք մնում,
Տես, արել թեքվեց ցած:

Զգարթանում ե ծերունին,
Խիսդ և վառվում իր հոգում,
— Ճարտարապետ վորդի ունեմ,
Մատաղ լինեմ ջինջ հոգուն...

— Հայրիկ, սիրտս չի համբերում,
Ուժ տուր, թափ տուր քո ձեռքին,
Յես առաջին քարն եմ կնում
Սոցիալիզմի մեծ շնոքին...

Յեկ ամեն որ, ճամբի վրա,
Կիսամութին թե լույսին
Աշխատում են հայր ու աղա
Ամբողջ որը միտուին:

(Զ. Սաբյան)

ՈՐ Ի Բ Ա Կ'

Աշխատում են—հոգնակի յերրորդ դեմք,

(Տես §§ 90—96) 7. Մուտագրել անցյալ անկատարով գործածված
բայերը յեկ ցուց տալ յուրաքանչյուրի դեմքը յեկ բիբլ:

I. Չնայելով վոր խճառին սարի լանջովն եր բարձրանում,
այսուամենայնիվ, ծառերը հոգանավորում եյին նրան: Մեծ մա-
սմբ նա անցնում եր բնական ծառուղիների սիջով, վորոնց,
յերեմն, փոխարինում եյին նաև ժայռերի շարքեր, իսկ դրանց,
յուր հերթում, հոգանավորում եյին գարձյալ հինավորց ծառեր,
վորոնք բուսած լինելով ժայռերի վերեռում, այդանից իրենց
սաղարթախիտ վոստերը ձգում, տարածում եյին ճանապարհի
վրա, վորը՝ հաճախ անցնում եր և սիզավեա բարձունքներով,
ուսկից տեսարանները բացվում եյին ավելի շքեղ ու ընդարձակ:
Այսպիսի դիրքերից յերեռմ եյին Մելգան լիուն անտառապատ
լանջերը և նրա մերկ, ծառազուրկ կատարը, վոր, սակայն, պա-
տած եր բաց կանաչ թափիշով: Նրան հետեւում եյին ուրիշ շատ
լեռներ, վորոնք գագաթների բարձրությամբ մեկը մրտւին գե-
րազանցելով՝ հորիզոնը գալ ձնում եյին վսեմ ու փառահեղ:

(Մուրացան. «Անտառը»)

ՈՐ Ի Բ Ա Կ'

Բարձրանում եր—յեղակի յերրորդ դեմք...»

II. ԸՄԲՈՒՏԻ ՄԱՀԲ

Անտառը հուզված եր, հուզված մեծապես:

Խուր գալրագրն մի շշուկ զրավել եր նրան:

Հոկա կաղնին ըը ըուսն շարժումով կուանում եյին դեպի
հաղիները, թեղին ու լորին վրդովված՝ շշում եյին թփերն
անդամ, անձոոնի բաղեցներով գալարված, վոտները ճահճի մեջ,
դաղճ հողի վրա պառկած՝ անհանդիստ եյին... Անտառն ամբողջ

հուզված եր, Անսովոր մի գեղը եր տեղի ունենում այդ բազ-
մադարյան ճահճային աշխարհում, ուր ծառերը մինչեւ այդ անում
եյին մեռնում, գիշության մեջ բորբոսնում, պարագիտներով
լցվում, բաղեղներով կաշկանգվում, և ուր բոլորը գոհ եյին,
վոչնչի չեյին ձգտում:

Բայց ահա մի որ ծառերից մի քանիսը պատուել եյին
ամեն պատուածակ, անցել ամեն ճահճ, և արմատները, փոխա-
նակ, ըստ վազեմի ավանդության, ձորն ի վար իջնելու, սկսել
եյին լեռն ի վեր պարզել Այդ անսովոր եր, խիստ անբնական,
և ամբողջ անտառն իզուր չեր հուզվել

(Վ. Փափազյան)

8. Մուտագրել յեկ ներկա ժամանակով գործածված
բայերը փոխել անցյալ անկատարի:

Մի խումբ յերեխաներ սովորել եյինք կրծել ու պոկել
ծերուկի կարթերի վրայից կեռերը: Պապիկը խուլ եր, քարի պես
մունջ... հավաքվում եյինք վետափ, պահվում թիկերի մեջ: Մե-
զանից մեկն ու մեկն իջնում և չօւրը, կամաց առաջ լողում,
մուենում ծայրի կարթին, տառմիներով կծուս, կտրում և կեռմ
ու հետ լողում, թփերի մեջ պահվում: Պապը քաշում և կարթն
ու զարմանում: «Ելի կրծել են անպիտանները»: Աւ հայնոյում և
ագան ձկներին: Իսկ ձեռք բերած կեռերը փոխում ենք, ծախում,
իրար պահ տալիս: Յես մի քանի կեռեր եյի ճարել ուղում
եյի ելի մեկը ձեռք բերել: Հենդ վոր պափեկը կարթը ծուրը
գցեց՝ մոտեցա, բոնեցի թելն ու կարթը բերանս առա, մեկ ել
պապը չքաշի կարթը թափով: Թելը ձգվեց ձեռքումս ու կեռը
խրվեց վերեկ ըթունքիս մեջ: Յես գոսալ սկսեցի, ու չուրը
բերանս և լցվում: Պապը քաշում և կարթը, ուղում և ձուկը
դուրս հանել: Սարսափելի ցափից ծոմովում եմ, վոտներս թա-
փահարում: Ել չնամբերեցի, գուրս յեկա ջրից ու սկսեցի գոռալ:
Պապը վախեցավ, շշմեց, կարթը ձեռքից ցած ընկափ: Վախից
ատամիներն իրար և խփում: Ախը բնչպիս չվախենար, ուղում
եր ձուկ հանել, գուրս յեկավ մի տղա: Մեկ ել թողեց ու փա-
խափ, վազում և, արեխները վոտներից ընկնում են, ինքը զեռ
փախչում և:

(Շուրխով. «Հերկած խոպան»)

9. Արտագրել յեվ անցյալ անկատար ժամանակով գործածված
բայերը փոխել ներկայի:

ՀՈՒՆԴԱՐԻ ԻՆՆԸ

Ամբոխը հանդարտ առաջ եր հոսում՝ ինչպես ովկիանոսի
մի մոայլ ալիք, վոր շարժվում ե հենց նոր բարձրացած աշնա-
նային փոթորկի առաջին հունչից: Մարդկանց դժգույն դեմքերը
նմանում եյին ալիքների պղտորմուայլ կատարներին: Նրանց
աչքերը փայլում եյին տեսնդորեն, բայց նայում եյին իրար
այնպես, վոր կարծես չեյին հավատում, թե այն, ինչ վոր պիտի
ունեն, աջողություն կունենա, ու զարմանում եյին, թե այդ
ինչքան մարդ և հավաքվել:

Ճառախոսների խոսքերը թրթուում եյին ողի մեջ ամբոխի
գլխին, վորպես փոթորկ, գորշ թուշուներ: Ճառերի մեջ հնչում
եր մի ցանկություն՝ գտնել մի բարի, կարող ձեռք, վոր ընդու-
նակ լինի միանդամբց կանգնեցնել ներկա ծանր կյանքի բն-
թացքը և մի ավելի լայն ու ազատ ճանապարհ բանալ նրա
համար:

(Մ. Գորկի)

(Տես § 96) 10. Արտագրել վաղակատար ժամանակով գործած-
ված բայերը յեվ փորուել Երանց թիվն ու դեմքը:

I. Յեվ կուչ և յեկել թշվառ դյուլացին
Զաթնանց դարավոր ընկուղենու տակ՝
Աշքերը հառած ավելցուկ հացին,
Իր գողորմելի բախտին անդիտակ.
Ու, յերբ վոր Զարթնանց վողորմած Խաթունը
Նրա քրախնքով լցված ամբարից
Նրան, աջ ձեռքով, ձախ ձեռքից թագուն,
Տվել ե մի բուռ բորբոնած գարի, —
Վերցրել ե նա ու հաղար բերան
Որհնել ե Զաթնանց հարստությունը,
Ու վող գագառում տարածվի արագ,
Զընդացել ե Զաթնանց անունը:

Իսկ Զաթնանց Սանթրոսն որհնված բահով
ձեղքել ե գլուխն աղքատ Ռուշանի,
Հափշտակել ե ընտիր սկահողն
Ու սովի մատնել մի տուն ընտանիք:
Մեռել ե Ռուշանն եղ վերքից հետո
Ու ման ե յեկել Սանթրոսն անպատճիժ:

(Ն. Զարյան)

Ո ր ի ն ա կ'

Վաղակատար

յեկել ե — յեկակի յերբորդ դեմք

II. — «Ավագ-վորսկանի անունն ե մենակ
Սարերին հայտնի ամեն մի մարդու.
Ավագ-վորսկանի գոչյունն ե մենակ
Լարվարի գոռող վորոտից ազգու:
Մանուկ որերից նա վորը մնալով
Ապրել ե ինչպես սկ ամպը սարին.
Որոր ե յերգել քամին սուլելով,
Յեվ նա ննջել ե մամոռած ժայռին.
Մթին ձորերի ահավոր կիրճում
Սիրել ե թանձր վառողի ամպեր.
Ուր փայլակ-կայծակ մահ են շառաչում,
Դրկել ե կայտառ սլաք ու շանթեր.
Բնկերն ե յեղել մի հին հրացան,
Իսկ անուշ յերգը՝ գնդակի բզեց...»

(Վ. Միրաքյան. «Լաւարի վորու»)

III. Արտագրել ընդգծված բայերը յեվ փորուել Երանց
ժամանակը, թիվը յեվ գեմքը:

Անկողնի վրա մեկնվել եր գունատ և նիհար Թեռուն՝ խամ-
րած աչքերով: Կինն արտասվալի՝ կծկվել նսել եր կողքին,
յերեխաները վերահաս ցրտից, մերկությունից և վշտից քար
կարած՝ մեղ ելին նայում անկյուններից:

Ու յերբ խնամօւմ ելինք թշվառին, պատմեց նա իր սարսափելի պատմությունը:

Խոի ելին ձեռքից հողը: Թուղի ելին, վոր մաքրեր, հերկեր, անպետք հողն իր քրտինքով փափկացներ, համառ կամքով ըերբիության հասցներ: Յեվ ապա հանկարծ մի որ վճիռ ելին սվել, անտառի պահապաններին ուղարկել, վորոնք ծեծել ելին նրան և հողիցը գուրս շպրտել:

Հողի աշխատավորը կարծել եր, թե քրտինքն ու աշխատությունը նույնքան արժեք ունեյին հողի արդյունքն ստանալու համար, վորքան բռնի ուժը: Սակայն նրան շատ ազդու կերպով հասկացրել ելին, վոր դեռ չեն յեկի այդ որերը, և վոր հողի տերը նա յե, ով ուժ ունի, ով ունի կոսկիտ ու գազանային բռունցք:

(Վ. Փափաղյան. «Հողի աշխատավորը»)

Ո Ր Ի Ա Մ Կ'

Նոտել եր—վաղակատար անցյալ,
յեղակի, յերբորդ դեմք

(Տես § 96) 12. Արտագրել յեվ քնզգծել հարակատար ժամանակով գով գործածված բայերը:

Սահամերձի մահճակալը վրած եր պատի տակ, լուսամտի առջև: Մի կողմում կանգնած եր մեռնողի կինն աղջկա էետ, մյուս կողմում՝ վորդիները: Ինքը մահամերձը նստած եր անկողնու մեջ, հենված փափուկ բարձերին, ծնկները մետաքսե վերմակով ծածկած, ուսերն ու կուրծքը կիսով չափ մերկ, գլուխին անզոր վար թեքած: Բժիշկը նորից նրա կաշվի տակ մեջքի կողմից սրսկում եր ինչ-վոր սթափեցուցիչ հեղուկ: Անհրաժեշտ եր մի քանի բռպե ևս պահպանել կյանքը հյուծված ու քայլաց ված անոթի մեջ:

(Տես § 97) 13. Գորուել քնզգծված բայերի ժամանակը, գեմքը, թիվը յեվ խոնարհումը:

Յերկու ԸՆԿԵՐՆԵՐ

Յերկու ընկերներ իրիկնապահին
հրացան առած՝ անտառ գնացին,
վոր մեկ բան վորսան,
շուտով յետ գառնան:

Հանկարծ անտառից մի արջ գուրս պրծավ

ու կատաղությամբ նրանց վրա վագեց:

մեկն շտապելով ծառը բարձրացավ,

մյուսն անձարացած՝ գետնի վրա պառկեց,

շունչն իրեն բացեց

ու անշարժ մնաց,

վոր արջը կարծե,

թե նա մեռած եւ:

Արջը մոռալով մոտեցավ նրան,

ականջը կամաց գրավ բերնի վրան,

ականջ դրեց,

հոտ բաշեց,

վերջապես նրան մեռած կարծելով,

հեռացավ զնաց գունչը լիզելով:

Փախած ընկերը ծառիցն իջամ ցած,

ընկերին հարցրեց, թե արջն ինչ առաց:

— Արջն ինձ պատվիրեց, վոր յես
մյուս անզամ,

քես պես մարդու հետ վորսի չգնամ,

վոր մեզ մի վաճանգ-բան պատահելիս՝

մենակ չթողնես ու ինքդ վախչիս:

(Վ. Աղայան)

Ո Ր Ի Ա Մ Կ'

Կնացին—անցյալ կատարյալ, հոդնակի,
յերբորդ դեմքը, և խոնարհման.

(Տես § 97) 14. Արտագրել անցյալ կատարյալ ժամանակով գործածված բայերը յեվ վորուել նրանց գեմքն ու թիվը:

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Նորից յեկա այցելության

Գործարանի պարիսպներին,

Յերկաթակուռ այն շնոքերին,

Վորոնք մի որ

Շունչ տվեցին իմ յերգերին:

Ահա մտա նրա շիմքուկ—
 ինձ վողջունեց արթուն սուլիչ
 Մեքենաներն ուրախացած
 Ու ինթացած
 Արձակեցին յերկաթե ճիշ:

 Իրար անցան ճախարակներ,
 Ժիր փոկերն ու պտուտակներ,
 Շոգեմուրճը հաղարտ թնդաց
 Ու վորոտաց՝
 — Դեռ չեմ հոգնել, դեռ չեմ հոգնել:

Նրան խմբով ձայնակցեցին
 Զարաձի հաղար մուրճեր.
 Ծլվալով զրնդացին,
 Կըլկւացին՝
 Վորպես ուրախ դեղձանիկներ:

 Յեվ այս ժխոր—համերգի մեջ
 Մեծ քուրայից ժայթքեց վոստնում.
 Այդ անհանգիստ կայծն եր անշեջ—
 Առավոտյան՝
 Նոր կյանքի յերդն եր պատրաստում:

(Հ. Հակոբյան)

15. Սրբագրել ընդգծված բայերը յեվ կազմել երանց անցյալ կատարյալ ժամանակի առաջին դեմքը:

ՋՐԱՆՅՅԻ ԲԱՅՈՒՄԸ

Ցնծում ե հովիտը:
 Այսոր հաղթության տոն ե:
 Վոսկեձորի ըոլոր դյուղերից, քաղաքից, ամեն կողմից եշերով, ձիերով, ջորիներով գալիս են ու գալիս:
 Բոլորն օտապում են դեպի թումայի ձորը:
 Ամեն մեկն աշխատում ե մոտ կոնգմել դրոշակներով

զարդարված պատվանդանին, վորի վրա ծաղիկների մեջ դրված և լենինի կիսանդրին: Զլում ե զուռնան, դրմբում ե թմբուկը և արձագանքում ե ձորը:

Մի տեղ յայլի լին բռնել, մի ուրիշ տեղ որջապատել են գոտեմարտողներին, գոմանք ոջախ են արել: ծուխը բարձրանում ե, կաթսաների մեջ խլիպրում ե խաշաման:

Սա հաղթության տոն ե:
 Հաղթական կամարը զարդարված ե ծաղիկներով ու դալար ձյուղերով:

Ողը թնդում ե հարյուրավոր մարդկանց գոռում-գոչումով:
 Տարիներով չոր ու ցամաք ձորն այսոր պետք ե հեղեղվի և ցածումն ընկած հոկայական, ճաքճաքած հողը պիտի ծծի կենսատու հեղուկը:

Հանկարծ հեռվում լավեց մի խուլ աղմուկ: Չորի գլխին յերեացին մի քանի հոգի: Նրանք ձորն ելին իջնում, և նրանց առաջանալու հետ միասին ուժեղանում ելին ուրախության աղաղակները: Ահա և բանվորները միացան իջնող խմբին. ելի միացան, ու խուն բազմությունը ձեռների վրա բերեց ճարտարապետ Ղամբարյանին ու վարպետ Ուանին: Ներքեռում իրարանցան. ծովի պես որորվեց ամբոխը և զըռհ տվեց դեպի ձորը:
 Թնդացին շրջակա լեռները:

(Մ. Մանկելյան)

Ո ր ի ն ա կ'

Շտապում են—շտապեցի:

(Տես § 99) 17. Սրբագրել յեվ ընդգծել իրամայական յեղանակով գործածված բայերը:

Արի, պոետ, բարի պոետ,
 Ցերպդ հյուսի՞ր մեր ցավից,
 Բնկերացի՞ր մեր սրտի հետ—
 Թեթևանանք հոգսերից:

Ցերպիր գու մեզ բուռն ցայտմամբ
 Սրտի բողոքն անմեղի,
 Նշավակի՞ր անդուսպ ցամամբ
 Բոնությունը ուժեղի:

(Հ. Հակոբյան)

ՅՅես §§ 99—100) 18. Սրտագրել Խրամայական յեվ ըղմանկան
յեղանակի բայերը, վորուել ժամանակը, գեմքը յեվ թիվը
ՅԵԿ, ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ.

ՅԵԿ, գարնան անձրեւ, թափվիր հորդառատ
Ցրտացած յերկրի սառ կըրծքի վըրա.
Թնդ նորից յերկիրն շունչ քաշե ազատ,
Թող նըրա կըրծքին ջերմ կյանքը յեռաւ:
Յերկար նա տանջինց դառնաշունչ ձմռան
Ցուրտ կապանքներում քեզ սպասելով.
Նա շատ համբերեց... կենաստու գարնան
Քաղցը կարուը ջերմ փայփայելով:

Թափվիր, այ անձրեւ, ինչպես մարդարիտ,
Ինչպես յերկնառաք ցողը կենասրեր,
Վոռոգից գաշտեր, անտառ ու հովիտ,
Կանաչով պատիր լեռներ ու ձորեր:

Թնդ հորդանալով ազբյուր ու գետակ
Սասց շղթաներ անահ խօրտակեն,
Դուրս գան ափերից, փազեն համբարձակ,
Ազատ խոխոջան, ազատ հարկաչեն:

ՅԵԿ, գարնան անձրեւ, թափվիր հորդառատ
Ցրտացած յերկրի սառ կըրծքի վրա.
Թնդ նորից յերկիր շունչ քաշե ազատ,
Թնդ նըրա կըրծքին ջերմ կյանքը յեռաւ:

(Ա. Մատուրյան)

Ո Ր Ի Բ Ո Ւ

ըղձական յեղանակ
քաշե—ապառնի, յեղակի, յերրորդ դեմք

19. Սրտագրել բայերը յեվ կազմել Երանց ըղձական յեղանակի
անցյալ ապառնի ժամանակի հոգնակի յեկըռորդ գեմքը:

ՎՈՉԵԱՐԻ ԿԻԹԸ

Արել չելած սարվորն արթնացավ,
Նորից ձորերում աղմուկ բարձրացավ
Նորից սայի տակ հոռում ե ճամպան,
Փոփոռում հարսի քողն ու դաթիղան:

Դալար յուրդերը ամպերի տակին
Աչքերը ձգած քոչվորի ճամպին՝
Ժապտալով հակինթ ցողերով առատ,
Կանչում են կարծես բույրով անարատ
... Կեսոր ե արդեն, կանաչ Լալվարից
Իջնում ե հանգիստ վոչխարը կթի.
Կթվելով մասմաս, անցնում ե բերից,
Լավում ե անուշ ֆշոցը կաթի:
... Վերջացավ արդեն վոչխարի կիթը,
Կաթսաներ տարան թարմ կաթով լիքը.
Մեկն ել զղակը շարժելով ողում,
Դեռ գառնարածին «յեկ, հեյ» ե կանչում.
Յերկար չանցնելով՝ սարի գագաթին
Դառների կայտառ հոտը յերեաց,
Խառնվելով նրանք մայրերի հոտին՝
Բերկրանքի հույզով մայում են ցրված.
Կանչում են, բայում գառըն ու մաքին,
Անուշ ձայներով վնասում են միմյանց,
Վհրը զտնելով իրա գառնուկին,
Ծծել ե տալիս, փայելով սրտանց.
Վորը խաղում ե մոր հետ կուշտ փորով,
Վորն ել մնում ե տխուր մայելով:

(Վ. Միրոքյան)

Ո Ր Ի Բ Ո Ւ

արթնացավ—արթնանալիք
իջնում ե—իջնելիք

20. Սրտագրել բայերը յեվ կազմել Երանց ըղձական յեղանակի
անցյալ ապառնի հոգնակի յեկըռորդ գեմքը

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Կոխվը վերջացավ: Դաշտում ընկած եյին սպանվածների
կույտեր, մարդկանց և ձիերի դիակներ: Այդ կույտերի միջից
լսվում եյին վիրավորների հառաչանքները:

Մի չորացած առվի յեղերքին պառկած ելին յերկու դիմա-
փոր, յերկուսն ել ծանը վիրավոր:

Նրանց զղեստները տարբեր ելին Մի քանի ժամ առաջ
գետ կատաղի թշնամիներ ելին:

Այժմ լուս նայում ելին իրար և ուզում ելին խոսել Բայց
իրար լեզու չելին հասկանում: Հանկարծ ավելի յերիտասարդը
սողեսող մոտեցավ «թշնամուն» և մեկնեց նրան իր ջրի սրվակը:
Հետո ել աշխատում եր թաշկինակով կտրել նրա վերքից հոսող
արյունը: Բայց վոչինչ գուրս չեկավ, միայն ինքն ավելի թու-
լացավ, պառկեց, քուն մտավ:

Վրա հաբավ պարզկա գիշերը: Ցուրտ քամին փչում եր հե-
ռավոր լեռներից:

Կես գիշերին տարիքավոր զինվորը կրկին մի փորձ արավ
նստելու, բայց իզուր, արգեն բոլորովին արյունաքամ եր յեղել:

Աչքը ցցեց իր հարեանի վրա: Յերիտասարդ զինվորը քնած
եր և կուչ եր յեկել գիշերվա կորող ցրտից:

— Պիտի սառչի, — անցավ հասակավորի մտքով, — անպատ-
ճառ պիտի սառչի խեղճը. ինչքան ել յերիտասարդ եւ:

Յերբ արշալույսի դեմ վիրավորներին հավաքող խումբը
մոտեցավ նրանց, յերիտասարդը զարթնեց, ուզեց բարձրանալ
ու զարմացավ. վոր իր վրա մի վերարկու կար ցցած:

Նայեց շուրջ, նայեց հարեանին: Հարեանը մեռած եր և
պառկած առանց վերարկվի. նրա վերարկուն եր իր վրա:

(Վ. Գարշին)

Ո Ր Ի Ա Մ Կ՝

վերջացավ — վերջանային
ընկած ելին — ընկնելին

(Տես § 100) 21. Սրտագրել յեվ ընդգծել պայմանական
յեղանակով գործածված բայերը:

Յեվ ծեղը ինձ համբուրելով ձեն կտա.
Կուրծքս լիքը թարմ բուրմունքով կթնդա.
Ու կարկաչուն աղբյուրների ցողերով
կլըգացվիմ և կճախրեմ նոր ճամբով:

Կերթամ հեռու անապատներ ու ծովեր,
Կթափառեմ անհայտ վայրեր, աշխարհներ,
Ուրիշ ազգեր, ուրիշ սրտեր տեսնելու,
Յեվ ամենը հասկանալու, յերգելու:

Յեվ բնության հրաշքները կտեսնեմ,
Նրա լեզուն, հաղար տեսակ, կլսեմ.

Ուրիշ յերկինք, ուրիշ աստղեր գրկելու,
Յեվ ամենը խորն զգալու, յերգելու...

(Ագ. Խ. «Նորից յեկան զարնան անուշ որերը»)

22. Պորուել բայերի յեղանակը, գեմքը, թիվը յեվ ժամանակը:

«Ազատ լեռների ազատ զավակներ,
Մենք քեզ բերել ենք անթիվ գոհարներ.

Յերկնքի զստեր — վարդի լեռնասուն

Կցողենք կուրծքի անուշնոտություն:

«Մենք յերանավետ քնքուշ նվազով
Կրկոչենք խորքից ձկներն յերամով

Յեվ գոսկեղոծված զարնան արեից

Քեզ մեր զվարթ պարին կանենք խնդակեց:

«Յեվ քո ականջին միշտ սիրո յերգեր
Մենք արշալույսից կասենք մինչ աստղեր,

Յեվ քեզ կըփարենք և քո ծեր կուրծքին

Մենք հանդչել կըտանք մեր քաղցր կրքին...»:

(Հ. Հովաննիսյան. «Ժայռը»)

(Տես §§ 95—101) 23. Պորուել բայերի յեղանակը, ժամանակը,
թիվը յեվ գեմքը:

Ակոբը քնած եր անհանդիստ, հաճախ դեն եր ձգում վեր-
մակը, ինչ-վոր անկապ բառեր ասում. Մարգոն շարունակ նըս-
տած եր նրա զլիավերելու. սրտի մորմոքով նա լսում եր Ակոբի
զառանցանքն ու մոայլ մտքերի մեջ ընկնում. նրա ծանրանա-
լու հետ ինքն ել եր ծանրանում:

Ակորն այրվում եր տեսդից: Նրան թվում եր, թե մահճաշ կալի տակից վառում են իրեն, հետո իբր վառվում ե տունը, ինքը գուրս թռչում, ընկնում դաշտերը, սարերը... Անցնում ե կանաչներով, սառնորակ աղբյուրների մոտով, բայց հենց մուտենում ե, զոր խմի, ծարավը հագեցնի, ինչ-որ զինված մարդկի հարձակում են ու չեն թողնում...

Նա առաջ ե գնում, հասնում ե ձորակին: Նայում ե ձորին ու գարմանում, դիմացը բարձրացել ե մի հսկա արձան: Արձան ե կարծես, բայց միկնույն ժամանակ և կենդանի մարդ,—ինչինն ե իր առաջ, լույսով վողողված: Նա խորաթափանց աչք ե ածում չորս կողմը:

(Արագի. Շառյակը)

Ո ր ի ն ա տ կ'

քնած եր . . . սահմանական յեղանակ, անցյալ հարակատար, յեղակի թիվ, յերրորդ դեմք:
խմի ըղձական յեղանակ, ապառնի, յեղակի թիվ, յերրորդ դեմք:

(Տես § 103) 24. Արտագրել Ժիտական բնույթով գործածված բայերը յեվ վորուել Երանց յեղանակը, ժամանակը, գեմքը յեվ թիվը:

— Վալողիա, — զիմում ե ընկերներից մեկը, — միթե չես հասկանում, զոր սրանք մի պատճառ են փնտում, վորպեսզի գնդակահարեն բոլորիս: Մենք չպետք ենոր զոհեր տանք. չեզ մեր ընկերները շուտով կմտնեն քաղաք...

— Չեմ կարող համբերել, հասկանեմ ես, չեմ կտրող, — ասում ե Վալողիան, բոռնցքները ցնցելով, ապա հենվելով պատին, յերկու ձեռքով սեղմում ե գլուխը:

Քունը փախչում ե բոլորի աչքերից. հուզված ջղերը յերկար ժամանակ չեն հանդատանում: Բայց գալիս ե պահապանը ու պահանջում, զոր գնան իրենց տեղերը:

Նորից պառկում են, ու ցած ձայնով խոսում իրար հետ, ծիելով հասարակ, կոշտ թռւթունը: Խոսում են իրենց ընկերների մասին, նրանց վերջին խոսքերի մասին...

— Մնաք բարով, ընկերներ, մենք ել չենք դառնալու...

Վաղ առավոտից բանակի դուռը բացվում ե ու ել չի կողպատում: Պահապանը ներս ե մտնում ու բարեկում քծնելով. նրու դաժան, զորշ զեմքին այնքան ե սազում ժպիտը, վորքան ազատությունը՝ բանատին:

— Յեթե ուզում եք, կարող եք գուրս գնալ, — առաջարկում ե նա:

Բայց վոչ վոք գուրս չի գնում, զգուշանալով պրովոկացիայից, վորպեսզի փախչողների տեղ չդնեն ու գնդակահարեն:

(Արագի. «Խորհրդային առավոտը»)

25. Կազմել տրված բայերի Ժիտական բնույթի խոնարհման համապատասխան ձեվերը յեվ ցուց տալ յեղանակը, ժամանակը, գեմքը յեվ թիվը:

Գնում ե, կարգաց, մոտենալու յի, կտրել ե, պատճում եր, քնած ե, տեսնես, լինեյիր, մնար, կասեմ, պիտի խոսի, լսիր, վազեցիք, կրերեմ, կդառնաք, կհասահն, կբռնեն, մնացել եր, պառկել ե, ժպտում եր, մոտենալիք:

Ո ր ի ն ա տ կ'

Գրական բնույթի

Խոնարհում

դնում ե

չի գնում — սահմ. յեղանակ, ներկա, յերրորդ դեմք, յեղակի թիվ:

4. Ս Ե Ռ

(Տես §§ 96—104) 26. Արտագրել բայերը յեվ վորուել Երանց սեռը, յեղանակը, ժամանակը, խոնարհման բնույթը:

Համբոն քաղաքում Գիբորին ծառա տվագ բաղազ Արտեմի տանը: Պայմանն են եր, զոր Գիբորը պետք ե տունը մաքրեր, ամանները լիանար, վոտնամանները սրբեր, զուքանը բաժին տաներ ու ես տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի:

Մի տարուց յետը բազազը նրան պետք ե տաներ դուքան,

շիներ դուքնի «աշկերտ», ու եսպես Գիքորը պետք ե բարձրանար:

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ—ասավ բազազը պայմանը կապելիս:—Թե զբուաթը կուզես, դեռ դու պիտի տաս, վորքու վորդին բան ե սովորելու: Ախր իսկի բան չգիտի...:

— Վորտեղից զիտենա, խազեյին ջան, — պատասխանեց Համբոն, — վոր զիտենար, ել մւր կրերեյի. յես ել բերել եմ, վորքան սովորի...:

— Կըսովորի, ամեն բան կըսովորի: Ենապես սովորի վմբ... Զեր կողմերից են Նիկոլն ինչ ե, վոր իրեն համար դուքան ուշնի բաց արած, նա ել ինձ մոտ ե մարդ դառել: Ամա վերջում մի ջուխտ չայի գրալ ու մի քանի բան գողացավ...:

(Հ. Թումանյան. «Գիքորը»)

Ո ր ի ն ա կ'

պետք ե մաքրեր—ներգործ. սեոի, հարկադր. յեղանակ,
անցյալ ապառնի, յեղակի, յերրորդ
գեմք, գրական բնույթի խոնարհում.

27. Փօրուել բայերի սեոը, յեղանակը, ժամանակը, թիվը
յեվ գեմքը

I. Այժմ անցավ գործադուների խնդրին: Ըստ եյությառ նա գեմ եր գործադուներին: Այդ շատ զանդաղ միջոց ե և ավելի ևս սաստկացնում ե բանվորների տանջանքները: Բայց վորովինետե ոլայքարի լավագուն միջոցը չկա, պետք ե գործադուն անել, յերբ այդ անխուսափելի յե. գործադուներն, այսուամենայնիվ, խիստ ֆնասում են կապիտալիստներին: Այս գեպքում, նրա առելով, ինտերնացիոնալը մի կատարյալ վրկություն ե հանդիպանում գործադուլավորների համար: Նա որինակներ բերեց: Փարիզում բրոնզագործների գործադուլի ժամանակ գործատերերը մի անդամից զիջեցին ամեն բանում, հենց վոր իմացան, թե ինտերնացիոնալն իր ոգնությունն ե ուղարկում: Լոնդոնում ինտերնացիոնալը փրկեց ածխափորներին՝ իր հաշվով Բելգիա վերադարձնելով գործատերերի ապսպրած բանվորներին: Հենց վոր բանվորները մտնում են Միջազգային Միության մեջ, գործատերերին սարսափ ե բանում: Նրանք զիտեն, վոր այժմ իրենց

աշխատավորները կազմում են աշխատավորական այն մեծ լանակի մի մասը, ուր ամենքն ել պատրաստ են ավելի շուտ զոհվել իրար համար, քան ստրուկ մնալ կապիտալին:

(Եմիլ Զոլա. «Ինտերնացիոնալը բանվորների մեջ»)

Ո ր ի ն ա կ'

Անցավ—չեղոք սեոի, սահմանական յեղանակի անց.
կատարյալ յեղակի, յերրորդ գեմք

II. ԱՐԾԽՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՒՆ

Յեղակ՝ մի անգամ անտառի միջին
Արծիվս ու կաղնին եսպես վիճեցին,
Թե վարն իրենցից շատ տարի կապրի,
Վարն ե գիմացկաւն ու պինդ ավելի:
Արծիվս ասավ՝ յես, կաղնին ել թե՝ յես:
Յերկուսն ել համառ ու հըպարտ հսպես՝
Մեծ-մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,
Վերջը ես տեսակ պայման կապեցին:
Ժամանակ գրին հինգ հարյուր տարի
Արքան հավքերի, արքան անտառի,
Վոր թե վորոշած են որին հասնեն,
են որը մին ել գան, իրար տեսնեն:

III. Ու արծիվս իսկույն կաղնուց հեռացավ,
Հըզոր թեմերը շարժեց, վերացավ
Դեպի ամպերը, զեպի ժայռերը,
Ուր անց ե կացնում իր լավ որերը:
Կաղնին ել փըռեց ճյուղերն արմատի,
Ու ենպես հուժկու կանգնեց անտառում,
Վոր վայր ըլնկնի ել հինգ հարյուր տարում:
Դարե՛ր անց կացան: Յեվ ահա մի որ
Արծիվս յեկավ ծերացած, անզոր,
Ծըզոցը կտրած, տըկար, հեալով,
Թույլ-թուլ թեմերը հազիվ քարշ տալով
Տեղ հասավ մի կերպ, նայեց զես ու զեն,
Տեսավ, վոր կաղնին ընկել ե արդեն.

Ճյուղերը թեև գեռ թարմ ուկանած
Ընկել եր ահեղ փոթորկի առաջ:
— Հեյ, կանչեց, գոռող, պարծենկոտ կաղնի,
Դե լալ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգ հարյուր տարուց մի ժամ ել դեռ կա
Ընկել ես արդեն, անկոտրում հըսկա:
— Հինգ հարյուր տարի ապրել եմ կանգնած,
Եղքան ել կապրեմ դեռ եսպես թիքնած,
Մինչեւ լրան մի հազար տարին.
Պատասխան արվագ ընկած վրթիսարին:
(Հով. Թուժանյան)

(Տես § 105) 28. Գրել բայերի անորոշ գերբարք յեվ վորոշել
նրանց կազմությունը (պա՞րզ են, թե՞ ածանցագոր):

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, զլուխը կոխեց տակը, տապ
արավէ
«Լուսնյակ գիշեր, բոլորովին քուն չունեմ:
ինձ տեսնողը կարծում ե, թե տուն չունեմ, վայ, տուն
չունեմ»...—իր յերգը յերգելով վասոն հաց եր ուտում: Գիքորը
վերմակի տակից յերբեմն զգույշ ծիկրակում, թաքուն նայում
եր նրան, կրկին աշքերը ծածկում: Նա են որը հաց չեր դրել
քերանը, ծեծվել ու լաց եր յեղեր այժմ ել քաղցած պառկեց,
ու քունը չեր տանում:

— Հը, վի՞ն ա, սոված քունդ չի՞ տանում հա, եղպես...—
նկատեց արաձնի վասոն ու մի կտոր հաց ու պանիք տվագ
գիքորին:—Դե առ, տեղի տակին թաքուն կեր, խաղեյինը չե՞
մանա:

Գիքորը հավատակեց հաց ու պանիքը, զլուխը կոխեց տեղի
տակը, թաքուն ուտում եր ու մտածում: Մտածում եր իրենց
տան վրա, են որերի վրա, յերբ ազատ խաղում եր հանգերում ու
լիասիրա հաց ուտում, մտածում եր են յերեկոների վրա, յերբ
ներն ու մերը կովում եյին իրեն քաղաք բերելու համար... մերը
լաց եր լինում, չեր ուզում...»

— Ա՞ս, նանի ջան ինչ լավ եր սիրտդ իմացեր,—հառա
չում եր գիքորը տեղի տակին ու հաց ու պանիքն ուտում
ականը սրած, թե խաղեյինը չի գալի:

Իսկ առավոտը կանգնած եր խանութի դռանը:

(Հ. Թուժ. «Գիքոր»)

Բալդին յեկավ տսքտնքալով.
Վոսկեն մեջքին դընզգընզալով:
Վայ իմ որին՝ տերտերն աւավ,
Թռավ տեղից, տեղ չգտավ,
Կնկա փեշի տակը մտավ.
Բալդին նրան փեշի տակից
Քաշից հանեց՝ բռնած միքքից:
Ասավ. «Բերի յես քո գանձը»
Տարգա գերջն ե, տուր իմ վարձը»:
Յեվ տեր ժլատը
Բռնեց ճակատը,
Բալդին մի հետ կըտտացրեց,
Նրան ոճորքը թոցրեց.
Մի անգամ ւլ կըտտացրեց,
Լեզուն բերնում լոհցրեց.
Վերջն ել վոր չկըտտացրեց,
Խեղճ տերտերին խելքից զրկեց:
«Ժլատ ծերուկ, ես քեզ մի դաս,
Եժանության ել ման չըգա՛ս»:

(Ա. Պուշկին. «Տերտերն ու իր Բաւկի ծառան»)

5. Կ Ե Ր Ո

(Տես § 108, 109 և 110) 30. Նրանգերի բայերը յեվ վորոշել
թե վո՞ր կերպի յեվ ի՞նչ սեռի բայեր են:

Անտոնինա իվանովսան առաջին անգամ եր տեսնում նավ-
թային հրդեն: Կես զիշերին, զարթնելով շչակների ձայներից,
միանգամից չհասկացավ նրանց նշանակությունը: Զե՞ վոր ամեն
գիշեր տասներկու ժամին սուլում են, յերբ բանվորների հերթա-
փոխն ե: Նա այն ժամանակ սթափվեց, յերբ լուսամուտներից
ներս հոսեցին կրակի ծիրանագույն շոգերը, Նտապով հագնվեց
մի կերպ, վաղեց խոհանոց, զարթնեցրեց ծառային, հետո աղախ-

Նին, և յերբ վերադարձավ, արդեն վտանգի մեջ եր: Նու չկամեցավ յերեխաներին՝ մերկ՝ դուրս տանել, չըմբռնելով, փող նավթալին հրդեհի ժամանակ ամեն մի ուշացած շարժում վտանգ է սպառնում: Ակսեց հազարներ նրանց, չնայելով ծառացի և աղախնի թախանձանքներին՝ շտապել դուրս: Ծառան վախազի իր անձն ազատելու...»

Զուպրովին առաջին և յերկրորդ սենյակների դռների մեջ ընդհարվեց Դավիթ Զարգարյանի հետ: Նա մի ճեռով բռնել եր Վասյային, մյուսով գրկել Ալյոշային: Ծուխն արդեն կուրացնում եր նրան, գոչինչ չեր տեսնում, քայլում եր առաջ մթության մեջ: Մի վայրկյան ևս, և պիտի շփոթվեր, ուղին կորցներ: Չուպրովը մի ճեռով խլեց նրանից Ալյոշային, մյուսով փետուրի պես բարձրացրեց Վասյային: Մանուկներն ապշել եյին, չգիտեյին՝ ինչ ե կատարվում: Զելին լալիս սարսափի զորությունից կաշկանդված:

— Մամա, զոռաց Վասյան, ամուր գրկելով Զուպրովի պարանոցը:

Դավիթը, շունչն ուղղելով, հետ գնաց: Մեկը բռնեց նրա թերթը և հետ մղեց: Ո՞վ եր՝ չիմացավ: Մի քանի վայրկյան անցած՝ դռների մեջ յերեաց Կարապետը, փոր ուսերի վրա զուրս եր բերում Անտոնինա իվանովային:

Կարապետի հետեւ յերեաց Ռամազ Ռամուլը, տիկնոջ աղախնին շալակած:

(Եիրվանզագե. «Քառու»)

Ո Ր Ի Ա Կ՝

Բայ	Կերպ	Սեռ
գալիս ե	սոսկական	չեղոք
հազգնել	պատճառական	ներդործական

(Տես § 8'—115) ՅԵ. Արտագրել բոլոր բայերը յեվ զորուել Երանց գերբայական ձեվը, սեռը, կերպը, յեղանակը. ծամանակը, գեմքը, թիվը յեվ խոնարհման բնույթը:

Տ Ե Ր Ն Ո Ւ Ծ Ա Ռ Ա Ն

(Հերթակը)

1

Ի. Յերկու աղքատ ախտեր են լինում: Մտածում են՝ ինչ անեն, զո՞նդ ապրեն, փոր իրենց տունը պահեն: Վճռում են

82

փոր փաքը տանը մնա, մեծը գնա մի ունեորի ծառա մտնի, ոսձիկ ստանա, ուղարկի տուն: Փոքը մնում ե տանը, մեծ վեր ե կենում, գնում մի հարուստ մարդու մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչեւ գարնան կկի ձեռ ածելլ: Ես հարուստը մի չլսված պայման ե զնում ծառային:

Ասում ե. «Մինչեւ են ժամանակը թե դու բարկանաս, հազար մանեթ տուգանք տաս ինձ, թե ինս բարկանամ—լես տամ»:

— Յես փոր հազար մանեթ չունեմ, վիրտեղից տամ,— ասում ե ծառան:

— Վոչինչ, փոխարենն ինձ տասը տարի ձրի կծառայես:

Տղան մին վախենում ե այս տարորինակ պայմանից, մին ել մտածում ե, թե ինչ պետք ե պատահի: Ինչ ուղում են՝ անեն, յես եմ ու չեմ բարկանալ, վերջացավ գնաց: Իսկ թե իրենք կբարկանան, թող իրենք ել տուժեն իրենց դրած պայմանով:

Ասում ե՝ լավ. համաձայնում ե: Պայմանը կապում են ու մտնում ե ծառայության:

II. Մյուս որը վաղ, տերը վեր ե կացնում ծառային, ուղարկում ե արտը հնձելու:

— Գնա, ասում ե, —քանի լույս ե, հնձի, փոր մութն ընկնի, կգաս:

Մտան գնում ե ամբողջ օրը հնձում, իրիկունը հոգնած գալիս ե տուն:

Տերը հարցնում ե.

— Եղ հեր յեկար:

— Դե արել մեր մտավ, յես ել յեկա:

— Զե, եղակես չի, յես քեզ ասել եմ՝ քանի լույս ե, պետք ե հնձես: Արել մայր մտավ, բայց տես նրա ախտեր լուսնակը դուրս յեկավ: Սա ինչ պակաս ե լույս տալիս...

— Եղ վմնց կիմնի, —զարմանում ե ծառան:

— Հը, դու արդեն բարկանում ես, —հարցնում ե տերը:

— Զե, չեմ բարկանում... Յես միայն ասում եյի՝ հոգնած եմ... մի քիչ հանգստանամ, —կակազում ե վախեցած ծառան ու գնում ե նորից հնձելու:

Հնձում ե հնձում, մինչեւ լուսնակը մեր ե մտնում: Բայց լուսնակը մեր ե մտնում թե չե, գարձյալ արեգակն ե դուքս գալիս:

Մտան ուժապատ վեր ե ընկնուարառում:

— Վայ քո արտն ել հարամ ըլնի, քո հացն ել, քո տված ոռնիկն ել - սկսում են հայոյել հուսահատված:

— Հը՞, զու բարկանում ես, — կանգնում ե գլխին հարուսոք, Յերբ վոր բարկանում ես, մեր պայմանը պայման ե. ել չասես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում ե ծառային կամ հաղար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում ե կրակի մեջ: Հաղար մանեթ չուներ. վոր տար, հոգին ազատեր, տասը տարի ել ես տեսակ մարդու ծառայելն անկարելի բան եր:

Միտք ե անում, միտք, վերջը հաղար մանեթի պարտամուրհակ ե տալիս հարստին, դառն ու դատարկ վերտպանում տուն:

III. Հը՝ Ի՞նչ արիր, — հարցնում ե փոքր ախակերը: Ու մեծ սխակերը նստում ե, գլխին յեկածը պատմում, ինչպես վոր պատահել եր:

— Բան չկա, — ասում ե փոքրը, — դարդ մի անի՞ գու տօնը կաց, հիմի ել յես զնամ:

Վեր ե կենում, հիմի ել փոքր ախակը բնում ծառա մտն ում ելի նույն հարստի մոտ:

Հարուսալ գարձյալ վորոշում ե մինչև գարնան կկվի ձեն ածելն, ու պայման ե զնում, վոր յեթե ծառան բարկանա, հաղար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հաղար մանեթ տա ու այն որից ել ծառան ակատ ե:

— Զե, եղ քիչ ե, — հակառակում ե աղան, — թե զու բարկանաս, զու ինձ յերկու հաղար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ յերկու հաղար մանեթ տամ, կամ քսան տարի ձրի ծառայիմ:

— Լա՛վ, — ուրախանում ե հարուսալ:

Պայմանը կապում են ու այժմ ել փոքր ախակերն ե մտնում ծառայության:

Առավոտը լուսանում ե, ես ծառան վեր չի կենում տեղից: Տերը գուրս ե զնում, տուն ե գալիս, ես ծառան դեռ քնած ե:

— Ա՛լ աղա, դե վեր կաց ե, որը ճաշ դաշ դառավ:

— Հը՞, բարկանում ես, — գլուխը վեր ե քաշու ծ ծառան:

Զե, չեմ բարկանում, — վախսցած պատասխանում ե տերը, — Գիտյն ասում եմ՝ պետք ե ալտը գնանք՝ հնաւելու:

— Հա, վոր եղ ես ասում, վոչինչ, կպնանք: Ի՞նչ ես շտապում:

Վերջապես ծառան վեր ե կենում, սկսում ե տրեխները հագնել:

Տերը գուրս ե զնում, ներս ե գալիս, սա գեռ տրեխները հագնում ե:

— Ա՛ աղա, դե շուտ արա, հագի, ելի...

— Հը՞, հո չես բարկանում:

— Զե, մվ ե բարկանում. յես միայն ուզում եյի ասել վոր ուշանում ենք:

— Հա՛, եղ ուրիշ բան ե. թե չե պայմանը պայման ե:

Մինչեւ ծառան տրեխները հագնում ե, մինչեւ արտն են զնում, ճաշ ե դառնում:

— Ել ի՞նչ հնձելու ժամանակ ե, — ասում ե ծառան, — տեսնում ես ամենըն ել ճաշում են, մենք ել մեր ճաշն ուտենք՝ հետո:

Նստում են, ճաշն ուտում: Ճաշից հետո ել ասում ե. «Մշակ մարդ ենք, պետք ե մի քիչ քնենք, հանգստանա՞նք, թե չե՞»:

Գլուխը կոխում ե խոտերի մեջ ու քնում ե մինչեւ իրեկուն:

— Տն, վեր կաց, մթնեց, ե, ուրիշները հնձեցին, միը արտը մնաց, վայ քո զեսը զրկողի վիզը կոտրվի, վայ քո կերածն ել հարամ ըլի, քո արածն ել... ես ի՞նչ կրակի մեջ ընկա, — սկսում ե գորգոռալ հուսահատված տերը:

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես, — գլուխը վեր ե քաշում ծառան:

— Զե, մվ ե բարկանում. յես են եյի ասում, թե մթնել ե, առևն զնալու ժամանակն ե:

— Հա՛, եղ ուրիշ բան ե, զնանք, թե չե մեր պայմանը գիտես, վայ նրա մեղքը, ով բարկացավ:

IV. Գալիս են տուն: Տեսնում են հյուր ե յեկեր Ծառային զրկում ե, թե զնա վոչիսար մորթի:

— Վժը:

— Վորը պատահի.

Ծառան գնում ե:

Մի քիչ հետո լուր են բերում հարստին, թե հասիր, վոր
քո ծառան ամբողջ հոտը կոտորեց:

Ես հարուստը վազում ե, տեսնում ճիշտ վոր ինչ վոչխար
ունի, բոլորը մորթել ե ծառան:

Գլխին վայ ե տալիս, գոռում.

— Եղ ի՞նչ ես արել, այ անխիղմ, քո տունը քանդվի,
ինչ իմ տունը քանդեցիր:

— Դու ասիր՝ «ինչ վոչխար պատահի, մորթի», յես ել
յեկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթունցի, ուրիշ ավել
պակաս ի՞նչ եմ արել, — հանգիստ պատասխանում ե ծառան: —
Բայց կարծեմ դու բարկանո՞ւմ ես:

— Զե, չեմ բարկանում, միայն ափսոսս գալիս ե, վոր
եսքան ապրանքս փշացավ:

— Լավ, վոր չես բարկանում, ելի կծառայեմ:

Վ. Հարուստը մտածում ե՝ ինչ անի, վոր ես ծառայեց
պատվի: Պայման ե կապել մինչև մին ել գարնան կլվի ձեն
ածելը, այնինչ՝ դեռ նոր են մտել ձմեռը. դեռ վորտեղ են
գարունն ու կլուն:

Միտք ե անում, միտք, մի հնար ե մտածում: Կնոջը տա-
նում ե անտառում մի ծառի վրա հանում ու պատվիրում, վոր
«կուկու» կանչի: Ինքը զալիս, ծառային տանում ե՝ թե արի
գնանք վորսի: Հենց անտառ են մտնում թե չե, կինը ծառի
վրայից կանչում ե «կուկու», «կուկու»:

— Ը՞հը, աչքդ լույս, — ասում ե ծառային տերը, — կուկուն
կանչեց, ժամանակդ լրացավ:

Տղեն գլխի յե ընկնում տիրոջ խորամանկությունը:

— Զե՞, — ասում ե, — ո՞վ ե լսել, վոր տարվա ես յեղանա-
կին, ձմեռվա կիսին, կլուն ձեն ածի, վոր սա ձեն ե ածում:
Յես պետք ե ես կկլին սպանեմ: Սա ի՞նչ կկու յե...»

Ասում ե ու հրացանը քաշում գեղի ծառը:

Տերը գոռալով ընկնում ե առաջը, սկսում ե կովել ու անի-
ծել նրան ծառա բռնելու որը:

— Հը, չինի՞ թե բարկանում ես...

— Հա, ախակեր, հերիք ե, — ասում ե հարուստը: Արի, ինչ
տուգանք տալու յիմ, տամ, քեղանից ազատվեմ: Իմ դրած պայ-
մանն ե, յես ել պետք ե տուգեմ:

Եսպես փոքր ախակերը միծ ախակոր տված սկարաքի թուղթը
պատռում ե, հաղար մանեթ տուգանքն ել առնում ու վերա-
դառնում տուն:

(Հոգ. Թումանյան)

6. ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Յ2. Աերլուծել բայերը յեվ գոյականները:

I. ԾԱՂԻԿՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Մեծ գուն ընկավ, ձընհալն ընկավ,

Հողը շնչեց, զեփյուռն յեկավ,

Արեն յեկավ զառ ճառագած,

Հարցմունք արավ հողին հակված.

Արեվը. — Միրուն աղջիկ ինչ զրկեմ քեզ:

Աղջիկը. — Յես ծաղիկներ կուղեմ պես-պէս:

Արեվը. — Այ աղջուրներ, այ զետակներ,

Մաղի ներքե քնած եք զեռ:

Դուքս յեկեք, դուրս:

Շնաւ զեպի լույս,

Նոր աշխուժով

Ու նոր ուժով

Կարկաչեցեք

Ու կանչեցեք

Հողում քնած սիրունսերին՝

Ծաղիկներին ու ծիւրին:

II. ԶՐԵՐԸ. — Վուշ վուշ, վուշ վուշ:

Ես ինչքաշն ուշ...

Աղջի, աղջի, ծիւծաղիկներ,

Քանի քնեք, վեր կացեք, վեր,

Խնկածաղիկ,

Ծնկածաղիկ

Առու, աղբյուր կցուցուան...
 Բայց բեվեռում
 Հողմն ե գոռում,—
 Շուրջն ամայի ափեր մեռած,
 Սառցալեռներ, ծովեր սառած:
 Ու հեռագիր յեկավ սիրով՝
 — «Գրավված ե բեվեռը ծով,
 Մեծ ՍՏԱԼԻՆ, մեզ հետ ես միշտ,
 Մենք համարտ ենք, հավիտ անվիշտ
 Յեվ բեվեռի ցուրտ գագաթին
 Զարկինք մեր ալ դրոշն անդին,
 Վոր փողփողի նա շարունակ՝
 Աշխարհն առած իր շուքի տակ»:
 Ու յերկը հետ չքնաղ ու վես
 Կարդաց, ժպատց արևի պես
 Առաջնորդը մեր լուսախոհ,
 Վորից անդամ արևն ե գոհ:
 Համբավն հասավ ամենուրեք՝
 Ծովերից ծով աշխարհ անցավ,
 Թե մեր դրոշն ալ-վառ ու սեդ
 Ցուրտ բեվեռից վեր խոյացավ:
 * * *

V. իմ հայրենիքն ունի անդին
 Դյուցապուններ, վորոնց կրծքին
 Եքանշանն ե վառվում
 Յեվ մեր դեմքին ժպիտը փոռում:
 Ցնծությունով յերկիր թնդաց,
 Վարդեր իջան նրանց գլխին,
 Յեվ ծաղիկներ՝ սիրով ցողված,
 Յեվ համբույրներ ջերմ ու անդին,
 Յեվ յերգ հյուսվեց՝ համբույրներով,
 Յեվ կարոտից աստղերն իջան՝
 Յեվ յերկինքը ժպտաց խոնարին
 Դյուցապուններին իր աստղերով:

(Հով. Շիրազ)

Յ Ե Պ Ե Վ Ն Ի Ն Ե Ր

VI. Հայրենիքիս յեղենու անտառների վրա ծեր
 Ուրախության արցունքով կիջնեն աստղերն այս գիշեր,
 Յեվ բյուրեղյա ցողի պես նրանց լույսը մեղրածոր,
 Կպարուրի քնքշությամբ լեռ ու բլուր, դաշտ ու ձոր:
 Յեվ տուն կզա հեռավոր անտառներից յեղենին՝
 Կրերի խինդ ու ծիծաղ մանուկներին մեր անդին,
 Ու վոնց պատկերն իմ յերկրի հավերժական գարունքվա՞ն
 Նա կըբուրե այս գիշեր յերջանկությունը վաղվա:

Հայրենիքիս յեղենու անտառների վրա զով
 Կիջնեն աստղերն այս գիշեր նոր խնդության վառ հույզով,
 Ու զարդարված լուսեղեն գոհարներով յերկնքի
 Տոնածառը կշողա տանիքի տակ ամենքի,
 Կթնդա կյանքը խորունկ, գիշերն ի բուն կցոլան
 Նրա կրծքից լույս բղխող աղբյուրները զլգլան,
 Մանուկները քաջառողջ, վոր թիվն ունեն ասաղերի,
 Ծաղիկների հոսանքով կենեն զվարթ շուրջապարի:

Հինը կանցնի նիրհելու հավերժի ծոցն անմարմին,
 Ու կբացվի լույսի պես շոնդացող նոր տարին,
 Գիշերն ամբողջ ձյունահեր լեռներն արթուն կմնան,
 Յեվ մեղըլույս կծորե ուրախ յերկինքն անսահման,
 Զմուան քամին կսուլե, հիացմունքից հարբեցած,
 Ու յեղեղնու կատարին նորից աստղեր կիջնեն ցած.

Գիշերն ամբողջ հիացքով սարերն արթուն կմնան,
 Կառնեն աստղերն անհամար փայլը մեր նոր խնդության:

Հայրենիքիս յեղենու անտառների վրա զով
 Կիջնեն աստղերն անմարմին, կիջնեն լույսի յերիզով,
 — Ոհ, յեղենի ծիծաղուտ, կանաչ պատկեր գարունքվա,
 Յերբ ես տեսել խնդության լույսը իջած քեզ վրա,
 Փայլում եյիր գու միայն տանիքի տակ հարստի,
 Նա, վոր չուներ սեր և գութ, չուներ հույզեր վեհ սբախ.
 Հիմա պիտի զու զնդաս մանուկների համար բյուր,
 Լույս աներում մեր բոլոր, յերկրի համար մեր մաքուր,

Կյանքի համար, վորքեռ պես գալար և միշտ մնալու
Զյուների մեջ դարերի, վորոնք նոր են դեռ գտնու:

(Հով. Շիրազ)

7. ՍԱԿԲԱՅ

(Տես §§ 116—118) ՅՅ. Խմբավորել մակրայներն ըստ
տեսակեների:

Փողոցի անկյունում արդեն վառվեց լապտերը:
Ցերկինքը կամաց կամաց ծածկվեց ամպերով:
Հայրն ու մայրը կատարելապես յերջանիկ ելին:
Նա անմիջապես պառկեց քնելու:
Դուռն զգուշորեն բացից:
Հայրն, ի հարկե, լսեց և զբեթե վոչինչ չհասա-

կացավ:

Ինքն ամենեին չի հետաքրքրվում նամակով:
Քույրը հետպնտե հեռան ում եր իրենից:
Աշխատանքը վերջ ի վերջո հաղթանակում եւ:
Նա նորից խոստացավ դալ՝
Վաղն անպատճառ պիտի մեկներ քաղաքից:
Նա շարունակ խոսում եր այդ մասին:
Նա անպատճառ կիմանա, թե ովքեր են չարագործները:
Մարդ հազիվ և լսում նրա ձայնը:
Նա շտապով գուրս գնաց:
Բուրգը ծայրե ի ծայր վառվել եր:
Նրա աշքերի առջե իսկույն յերեացին յերեք հսկա պատկեր:
Նա վաղուց եր իր խոսքն ասել:
Ծուխն արագ արագ բարձրանում եր գեղի յերկինք:

(Տես § 117) ՅՅ. Խմբավորել ինվ խմբավորել մակրայներն ըստ
տեսակեների:

ՄԱՅՐԵ

Մաղկել են ծառերն ամենուր,
Քեզ նման, իմ փոքրիկ ժիր գորունու
Արեն և քեզ ժպտում կամացուկ,
Ու քեզ պես թագնվում և ծածուկ

Աճում ես, որեցոր մհծանում,
Նոր կյանքի դարպասին մոտենում.
Քայլերը քո փոքրիկ վրաների
Հաստատ են հնչում մայթերին:
Անհամբեր, այդ ձկուն մատներով
Դարպասն ես դու ծեծում անվրդով,
Հասնելով լայն շեմքին նոր կյանքի,
Ել կարոտ չես դու իմ գգվանքի:
Նոր մայր ե քեզ այստեղ հանդիպում,
«Հոկտեմբեր» են նրան անվանում,
Արեից ել նա ջերմ ե ու սիրող,
Քայլվածքը և՛ ուժեղ, և՛ հաղթող...
Թես այսոր քեզ նրան եմ հանձնում,
Իմ կայտառ, իմ փոքրիկ ժիր գարուն:

(Հով. Պողոսյան)

8. ԿԱՅ

(Տես §§ 119—121) ՅՅ. Խմբավորել կապերը յեվ խմբավորել
ըստ տեսակեների:

ՄԲՐԿԱՇԱԼԻ ՅԵՐԳԸ

Ծովի կապտավուն : արթության վրա մըրիկն ահա ամպեր
ե դիզում: Յեվ Մըրկահավը, նման սկ շանթի, հպարտ ճախրում
ե ծով ու ամպի մեջ:

Մերթ ալիքներին թեր բաղիելով, մերթ վորպես ոլաք
դեպի ամպերը թոփչք գործելով՝ ճում ե հալլ, — և ամպերը վերից
հրճվանք են լուսմ թուզունի հանգուգն, խիզախ կանչի մեջ:

Այդ կանչի մեջ և մըրիկի տենչանքը: Թափը ցասումի, հուրն
ըղձանքի ու յերաշխիքը գալոց հաղթության՝ այդ կանչի մեջ
են լուսմ ամպերը:

Ճայերը հեծում են մըրիկից առաջ, — հեծում, ոլանում են
ծովի վրայով և նրա խորքում պատրաստ են թաղել իրենց
սաբուափ մըրիկից առաջ:

Հեծում են նույնալիս և՛ ջրսուզակները, վորոնց խորթ ե

9. ՇԱՂԿԱՐ

(Տես § 120—123) 36. Սրբագրել օտղկապները յեվ ցույց տայ, թե վոր տեսակին են պատկանում:

... Շահյանը շուռ յեկավ և յերազից սթափվողի նման նայեց մորը, Ըստ յերեռւյթին թամարը կարծում եր, թե վորդին դուռ քնած ե, բայց տեսնելով, վոր արթուն ե, ներս մտավ և դուռը հետ դրեց (Ե.Դ.):

Անհրաժեշտ եր մի քանի րոսկ ևս պահպանել կյանքը հյուծված ու քայլարկավայ անոնթի մեջ (Երկ.):

Յեվ վոչ վոք չեր լալիս անկեղծորեն, բացի այրուց, իսկ տասնվեց տարեկան Արշակը, վոր ընտանիքի մեջ ամենակրտսերն եր, անտարբեր աչքերով նայում եր մերթ մեկին, մերթ մյուսին, կարծես գիտենալու համար, թե ինչ ե կատարվում իր շուրջը (Երկ.):

Յերեկոյան արտադրական ժոկվից հետո Պետրոսն ու Արքիկը կարծես իրար խոսք տված, զուրս յեկան միասին ու նեղ վողովով արագացրին քայլերը, վորպեսզի մենակ մնան (Արագ.):

Ո ր ի ն ա կ'

և — համադասական շաղկապ
վոր — ստորագասական շաղկապ

10. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՄ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՅԵՎ ԸՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ

37. Գորուել, թե յուրաքանչյուր բառ խօսի վո՞ր մասին և պատկանում, խոլովված յեվ խոնարհված ձեզերը Փոխարինել համապատասխան ուղիղ ձեզերով:

I. ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՈՌԸ

Մի լար, վորդիս, վոր չես լսում
ել մայրական քաղցր որոր.
Յես մեծ կովի յերդ եմ հյուսում
Ուոցքիդ սոտ ամեն որ:

ու անհասանելի կովով վասուակած կյանքի հաճույքը, շանթ ու վորոտից սարսում են նրանք...

Տիմար թեատը յերկուզով բռնված խութերի մեջ ե իր գեր ու ճարպոտ մարմինը թագցնում...

Միայն վես, հպարտ Մրրկահամս և ճախրում համարձակ ու իիզախորն՝ քրփաղեղ, ճերմակ ջրերի վրա:

Ամպերը նախկինից ավելի մոայլ ու միշտ դեպի յած՝ ծովի վրա յեն կախ ընկում, դիպում և ալիքները յերգով, շուրջ-

պարով դեպի վեր ձգում՝ շանթ ու վորոտին ընդառաջելու:

Ճայթում և սմպրոպը, ծասման քրփուրի մեջ հեծում են ալիքները, մրցում հողմի հետ: Մրրիկն ուժգին գրկախառնումով ահա վորում և յերամն ալիքի ու մոլեգնորեն ահարկու թափով շպրտում նրանց ժայռերի վրա, ուր զերթ մանրամաղ փոշու, ցնցուղի յի փոխում, փոխարկում զմբուխտի շեղջեր:

Մրրկահամը, նման սև շանթի, ճախրում և կանչով և վորոպես սլաք՝ ճեղքում և սմպերն ու իր թեերով քրփուր և կորում:

Յեվ նա խելահեղ ահա տարվում ե, վորպես չար վոգի, — հպարտ, սեաթույր, մրրկի վոգի, — և քրփում ե, և հեծեծում հապերն արկին, վոչ, չես քողարկի:

Հողմը վոռնում ե, ամպրոպը ճայթում... Կապույտ բոցերով հուբերատում են ամպի յերամները ծովի անհատակ անդունդի վրա: Մովը վորում և շանթի սլաքներն ու իր հորձանքում վանց: Այդ վորոտների արտացոլումներն իբրև հանգնում նրանց: Այդ վորոտների արտացոլումներն իբրև հուր ոձեր, շողում են ծովում, անհետ կորչելով:

— Մրրիկ, շուտով մրրիկ կպայթի սաստիկ:

Դա խիզախ ու վես Մրրկահամս և հպարտ ճախրում շասկոտ վոռնոցով ծովի յերեսին ցիր ու ցան յեղած շանթերի միջև, և հաղթանակի Մարգարեն ահա կանչում ե, գոչում:

— Փոթորիկն ահեղ թող ուժգին պայթեա:

(Մ. Գորկի)

Դու լսմամ ես այնտեղ, դրսում
Եաչ ու շառած, լաց ու կոծ.—
Մեր արյունն ե այնտեղ հոսում,
Ներկած և տուն, և փողոց...

Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ,
Բանվոր գնդեր ահարկու,
Քաջ մղում են մի մեծ կոիվ—
Աշխատանքի և վոսկու...

Այնտեղ վոսկին տեր-տիրական,
Վորպես դահիճ դժնաղեմ,
Սուր և պարզում մեր որական
Թույնով շաղախ հացի դեմ...

II. Այնտեղ հայրեր, այնտեղ վորդիք
Մի նոր կյանքի յեղերքում,
Վորպես մի-մի հերոս-մարտիկ
Մահն են զրկում ու յերգում...

Յեզ թնդում և յերգը ահեղ
Պատսեղների շարքերում,
Վորպես լեռնից վաղող հեղեղ,
Վորպես վորոտն ամպերում:

Այնտեղ և և մեր աչքի լույս,
Մեր ոչախի վառ ճրագ—
Հայրդ կովում՝ սիրտն ալեհույզ,
Մրտում և թույն, և կրակ:

Մի լար, վորդիս, վոր չես լուս
Ել մայրական քաղցր որոր,
Յես մեծ կովի յերգ եմ հյուսում
Որոցքիդ մոտ ամեն որ:

(Ա. Շատուրյան)

Ո Ր Ի Ց Ա Կ'

Գույնիան	Աձական	Թիւմ	Դեղուան	Բար	Մայուս	Կառ	Զարդարություն
Վորդիք	մայրական	մի	յես	լալ	—	—	վոր

III. Ծովի կապտավուն հարթության վըա մբօիկն ահա
ամպեր և դիզում: Յեզ Մրրկանավը, նման ուն շանթի, հպարտ
ճախրում և ծով ու ամպի մեջ:

Մերթ ալիքներին թէլ բաղիսելով, մերթ վորպես ոլաք դե-
պի ամպերը թորիչք գործելով՝ ճշում և հավը,—և ամպերը վերից
հրձվանք են լուսմ թաշունի հանդուզն, խիզախ կանչի մեջ:

Այդ կանչի մեջ և մբօիկի տենչանքը թափը ցասումի,
հուրն ըզձանքի ու յերաշխիքը գալոց հաղթության՝ այդ կանչի
մեջ են լուսմ ամպերը:

IV. Ճայերը հեծում են մբօկից առաջ,—հեծում, սլանում
են ծովի վրայով և նրա խորքում պատրաստ են թաղել իրենց
սարսափը մբօկից առաջ:

Հեծում են նույնպես և ջրուղակները, վորոնց խորթ և
ու անհասանելի կովով վաստակած կյանքի համուլքը, շանթ ու
վորոտից սարսում են նրանք...

Տիմալ թեատը յերկուով բռնված՝ խութերի մեջ և իր-
գեր ու ճարպոտ մալմինը թաղցնում...

Միայն վես, հպարտ Մրրկանախ և ճախրում համարձակ ու
խիզախորեն՝ վրփրադեզ, ճերմակ ջրերի վըա:
(Մ. Գորկի. «Մրրկանավի յերգ»)

38. Վերեվի վարժության III յեզ IV հատվածները վերլուծել
ըստ Յախագասուրյան տէսակների:

39. Վերեվի վարժության III յեզ IV հատվածները վերլուծել
ըստ Յախագասուրյան անդամների:

40. Վերեվի վարժության III յեզ IV հատվածները վերլուծել
ըստ Խոսչի մասերի:

ՑԱՆԿ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Եզ

1. Հարցական, բացականչական, հրամայական և պատմողական										5
նախադասություններ	+	+	+	+	+	+	+	+	+	
2. Նախադասության զվարյալ անդամներ										6
3. Լրացումներ	+	+	+	+	+	+	+	+	+	10
4. Պարզ և բարդ նախադասություններ										11
5. Կրկնողական վարժություններ	+	+	+	+	+	+	+	+	+	14

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Արմատ և ածանց	+	+	+	+	+	+	+	+	+	16
2. Բարդ բառեր	+	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	17

ՈՒՂԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Է ձայնավորի ուղղագրությունը	+	+	+	+	+	+	+	+	+	21
2. Յերկնչյուններ	+	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	22
3. Յ ձայնակապը	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	22
4. Բաղաձայնների ուղղագրությունը	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	23
5. Վանկ և տողադարձ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	25

ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խոսքի մասեր	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	28
2. Գոյական անուն	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	28
3. Հոլովեր	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	31
4. Յեզակի և հոգնակի	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	41
5. Հոլովումներ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	42
6. Ածական անուն	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	45
7. Թվական անուն	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	48
8. Դերանուն	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	51
9. Հոդ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	55

VI ԴԱՍԱՐԱԾՆ

1. Բայ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	59
2. Դերբայական	Ճեկ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	60
3. Յեզանակային	Ճեկ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	62
4. Մեռ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	77
5. Կերպ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	81
6. Կրկնողական	վարժություններ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	87
7. Մակրայ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	92
8. Կապ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	93
9. Շաղկապ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	95
10. Վերլուծություն ըստ խոսքի մասերի և ըստ նախադասության անդամների	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	95

Պատ. լոմբադիլը՝ կ. Սեղմակ
Տեխ. լոմբադիլը՝ ի. Վարդանյան
Մըբազմիչ՝ վ. Ավագյան
Կոնսորու սրբազրիչ՝ Յէ. Տէր-Եկոնանյան

Գլավլիտի լիազոր՝ ի. 1915 Հըմա. № 4804

Պատվեր 140. Տիբած 65000

Թուղթ 62×94. Տպադր. 6 մմ.

Մեկ մամ. 36480 նիշ.

Հանձնված ե արտադրության և փետրվարի 1939 թ.

Ստորագրված ե տպագրության համար՝ 28 մարտի 1939 թ.

Գետիւսակ 1 տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0928251

ԳԻՒԾ 1 Ր.
ԿԱԶՄԸ 50 Կ.

28823

11

Ա. ГАРИБЯՆ
Сборник упражнений
по грамотике и правописанию
V-VI кл.
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.